



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՔ
ԱԶԳԱՅԻՆ ՊԱՏՐԻԱՐՔԱՐԱՆԻ

ԱՏԵՆԱԳՐՈՒԹԻՒՆՔ
ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎՈՅ

ԲԱՑՈՒՄ 1875 ԱՄԻՆ

ՆԻՍՏ Զ.

4 ՅՈՒԼԻՍ 1875



ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ Յ. ԴԱՎԱՅԵԱՆ

1875

ԴԻԻԱՆՔ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎՈՅ

ՄԱՅՐ ԴԻԻԱՆ

Ստեփան Արարանեան	Վաշա	Ա.	ԱՅԵՆԱՊԵՏ
Ռուսինեան	Էֆէնտի	Բ.	»
Գրիստոստուր Ղազարոսեան	»	Գ.	»
Համբարձում Ս. Արամանեան	»	Ա.	ԱՅԵՆԱՊԵՏ
Գարեգին Մելիքեան	»	Բ.	»
Պօղոս Պանասեան	»	Գ.	»

ՉԵՌՆ ՀԱՍՈՒԹԵԱՆ ԴԻԻԱՆ

Տ. Խորէն Արքեպիսկոպոս Նար-Պէյ		ԱՅԵՆԱՊԵՏ
Տ. Յովհաննէս Բ. Մկրտեան		»
Նիկողոս Արամանեան	Էֆէնտի	»

ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹԵԱՆ ԴԻԻԱՆ

Տիգրան Եռուսեփեան	Էֆէնտի	ԱՅԵՆԱՊԵՏ
Գէորգ Ստեփանեան	»	»
Ռուբէն Կրամիչկէրտանեան	»	»

ԿԱԼՈՒԱԾՈՅ ԴԻԻԱՆ

Գրիստոստուր Ղազարոսեան	Էֆէնտի	ԱՅԵՆԱՊԵՏ
Յովհաննէս Ազնաւուրեան	»	»
Բարսեղ Հալաճեան	»	»

ՀԱՄԱՐԱԿԱԼՈՒԹԵԱՆ ԴԻԻԱՆ

Յովհաննէս Կոսեան	Էֆէնտի	
Ստեփան Պէլիկեան	»	
Սիմոն Միքայէլեան	»	

ՅԱՐԱՅԵՐՈՒԹԵԱՆ ԴԻԻԱՆ

Առաքել Ալթուն Տիւրքի	Էֆէնտի	
Տիգրան Կրամիչկէրտանեան	»	
Օգոսէն Խօճասարեան	»	

ԻՐԱՒԱՍՈՒԹԵԱՆ ԴԻԻԱՆ

Տ. Մատթէոս Վ. Իզմիրլեան		ԱՅԵՆԱՊԵՏ
Տ. Գրիգոր Բ. Աճէմեան		»
Սենեքերիմ Մանուկեան	Էֆէնտի	»

ՆԱԽԱՉԵՌՆՈՒԹԵԱՆ ԴԻԻԱՆ

Կարապետ Շահպաղեան	Էֆէնտի	
Յովսէփ Մազրմեան	»	
Ստեփան Փափաղեան	»	

ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ ԴԻԻԱՆ

Խաչատուր Միսաքեան	Էֆէնտի	ԱՅԵՆԱՊԵՏ
Կարապետ Իւթիւճեան	»	»
Յարութիւն Մէրեճի-Գուլի	»	»

ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎ

ԲԱՅՈՒՄ 1875 ԱՄԻՆ

ՆԻՍՏ Զ.

4 ՅՈՒԼԻՍ 1875

ՆԱԽԱԳԱՀ. — ՏԷՐ ՆԵՐՍԷՍ ՍՐԲԱԶԱՆ ՊԱՏՐԻԱՐԿ
ԱՏԵՆԱՊԵՏ. — ՍՏԵՓԱՆ ՓԱՇԱ ԱՍԼԱՆԵԱՆ

ԱԶԳԱՅԻՆ ԵՐԵՍՓՈՒԱՆՔ

ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ԵՐԵՍՓՈՒԱՆՔ	22. Աղարդմանեան Կարապետ	Բ.	Խոնկիտար Ս. Կարապետ
ԵԿԵՂԵՏԱԿ ԱՆՔ	25. Ապրո Սահակ	Բ. 2	49. Միհրան Պահաճեան
1. Գրիգոր Արքեպիսկ.	24. Գափամանեան Մինաս		50. Յովհաննէս ճիւղեան
2. Խորէն « Նար Պէյ	25. Խօրասանեան Յովհաննէս	Բ. Պ	54. Նիկողոս Արամանեան
3. Ամբրոսիոս Վ. Ռուբինեան	26. Մազարմեան Համբարձում	Բ.	52. Տրդատ Փափաղեան
4. Գարեգին « Թաթարեան	27. Մանկասարեան Խաչիկ		(Գ. Վիճակ)
5. Խորէն « Կիրոյեան	28. Մանուկեան Սենեքերիմ	Բ. 2	Յնրա
6. Կարապետ « Սերոբեան	29. Պանասեան Պօղոս		55. Արիկ Ունճեան
7. Հմայեակ « Գիմարեան	50. Պէրպէրեան Գրիգոր	Բ.	54. Գրիգոր Սելիմեան
8. Մատթէոս « Իզմիրլեան	51. Պայաճեան Յովհաննէս	Բ.	55. Մարտիրոս Յ. Տիգրեան
9. Յովհաննէս « Փափաղեան	52. Ռուսինեան		56. Միքայէլ Մամիկոնեան
10. Ներսէս « Այլանեան	55. Սուրենեան Յովհաննէս		57. Նշան Քաղաղեան
11. Արիստակէս Բ. Մամբրեան	54. Ստեփանեան Գէորգ	Բ.	58. Ստեփան Ինդիրեան
12. Գէորգ « Արծրունի	55. Տրքթոր Փէշտրմաճեան	Բ.	59. Տեղեմուր Մ. Երեմեան
13. Գրիգոր « Աճէմեան	56. Տրքթոր Ն. Մէլիքեան	Բ.	60.
14. Խորէն « Փէշիկեան	57. Քէրէսթեան Պետրոս		61.
15. Յարութիւն « Սերոբեան	(Բ. Վիճակ)		62.
16. Յովհաննէս « Մկրտեան	Պէշիքթաշ		Գաւրմ Կաշա
17. Սուքիս « Ստեփանոսեան			Միշաղիոյ
18.	58. Բարսեղ Հալաճեան	Բ. Պ	65. Կարապետ Պ. Պերեան
19.	59. Կարապետ Ս. Իւթիւճեան		64. Յակոբ Կոստանդեան
20.	40. Յարութիւն Մարգարեան		65. Յակոբ Պ. Նորասուկեան
ԱՇԽԱՐՀԱԿԱՆՔ			66. Յովհաննէս Աղայեկեան
(Ա. Վիճակ)			67. Տիգրան Եռուսեփեան
Գոնգրափոռ, Կիտիկ Կաշա ևն			Պէշտրմաճ ևն Ղաշաթիա
Գոնգրափոռի զոհր			68. Յարութիւն Մէրեճի-Գուլի
21. Աղարեգեան Սարգիս	Բ. 2		(Գ. Վիճակ)
Բ. Բացակայութիւն առաջին			Ղոզղոնճանի ևն Խնայիկ
Բ. 2 Բացակայութիւն երկրորդ			69. Յովհաննէս Կոսեան
Բ. Պ Բացակայութիւն բանաւոր պատճառաւ			70. Ստեփան Պէլիկեան
Հ. Հրատարակ			

Այս գրոյն վրայ փոքրիկ վիճարանութիւն մը տեղի ունեցաւ որոշելու համար թէ « իրքեւ պարզ հրաժարական նկատուելու է թէ իբրեւ պատճառարանեալ, եւ այս վերջին պարագային մէջ ժողովը չի կրնար Եփէնեան էֆէնտին իբրեւ բացակայ ճանչնալ եւ հրաժարականը մերժել » . բայց ժողովը Յ քուէի դէմ մեծագոյն մասով որոշեց իբր պարզ հրաժարական նկատել, եւ ԸՆՎՈՒՆՅՑ Եփէնեան էֆէնտին հրաժարականը :



Տեղէկ-գիրք երեւոյթի-մը ընդհանր-մը

Ատենապետ փաշան ծանոյց ժողովին թէ Սրբազան Պատրիարքն ապահովութեան ծանօթագրով մը Կիւանին յանձնած է քանի մը թաղերու ընտրողական ժողովոց կողմէն հասած երեսփոխանական նոր ընտրութեանց տեղեկագրերն, ինչպէս նաեւ եկեղեցական երեսփոխանաց դատէն պակասներուն տեղ կատարուած նոր ընտրութեանց տեղեկագիրը . եւ յաւելցընելով թէ օրէնքը կպահանջէ որ ամեն ալ յատենի աստ կարգացուին, եւ ժողովոյն կողմէ անոնց օրինաւորութեան վճիռը տրուի, ներկայացոյց նոյն տեղեկագրերը մի առ մի, որ կարգացուեցան յետագայ կարգաւ .

Ա. Հիւսիս-Եւրոպայի Պոլսոյ Կիւանի ընդհանր-մը

Ամենապատիւ Սրբազան Հայր

Ձեր բարձր Սրբազնութեան հրամանին համեմատ Պոլսոյ-գիւղի հետ միացեալ թաղս 25 մարտ 'ի մի գումարելով զատարար Ընտրողական ժողով կազմեցինք . եւ յիշեալ Ընտրողական ժողովոյ միջոցաւ թաղիս մէջէն երեսփոխանական ընտրութեան իրաւունք ունեցող 80 հոգի գտանք, որոնց ցանկը պատրաստելով 8 օր յառաջ հանդերձ ազգային Վարչութեան ուղղեալ հրահանգով եւ կարեւոր դատեալ ազգով եկեղեցւոյ բակը կախեցինք . եւ մարտ 25 սկսանք քուէթուղթերը ընտրողաց ղրկել :

Մարտ 30 կիրակէ օր ղկնի աւարտման Ս. Եկեղեցւոյ ատենը բացուեցաւ դպրոցին մէջ 'ի ներկայութեան Նախագահին եւ Ընտրողական ժողովոյ, եւ ընտրողը հետզհետէ իրենց քուէները բերելով քուէտուղթին մէջ ձգեցին

մինչեւ ցորոշեալ ժամն . որոշեալ ժամուն քուէհամարի գործողութեան ձեռնարկելով քուէտուղթ բացուեցաւ, եւ քուէները համարուելով ընդ ամենը 52 քուէ ունեցանք, որն որ քուէարկուաց թուոյն համեմատ եկաւ . յետ այնորիկ քուէները կարգացուելով առաւել քուէ ստացողը եղան հետեւեալ մեծապատիւ անձինք :

Նուրեան Յովհանէս էֆէնտի քուէ	41
Սեթեան Միհրան » »	11
Պէկեան Թադէոս » »	1

Ահաւասիկ մեր գործողութեան արդիւնքը սոյն հակիրճ տեղեկագրովս հաղորդելով Ձեր բարձր Սրբազնութեան,

Մնամք ամենախոնարհ ծառայք
Նախագահ եւ անդամք Ընտրողական ժողովոյ
Տ. ՍԱՀԱԿ ԲԱՀԱՆԱՅ Մ. ԲԱՌՆԻԿ ՍԵՖԷՐԵԱՆ
ՍԻՄՈՆ ՊԵՏՐՈՍԵԱՆ

Եւ ղիմաց Թաղական Խորհրդոյ
Արեւ-դէր Արեւ-դէր
ՄԿՐՏԻՉ ՊԵՏՐՈՍԵԱՆ ՍԻՄՈՆ ՅՈՎՀԱՆՆԷՍԵԱՆ
1875 ապրիլ 1
Բ. Հիւսար

Ամենապատիւ Սրբազան Պատրիարք Հայր
Նախագահ Ազգ. Վարչ. Քաղ. ժողովոյ

Հիւսարու եւ Պոլսոյ-գիւղի միացեալ թաղից երեսփոխան Ռուբէն Գրիգորեան էֆէնտին հրաժարման պատճառաւ անոր տեղ նորոգ երեսփոխանի մ' ընտրութեան համար Ձերդ Սրբազնութեան կողմանէ ուղղեալ հրահանգաց համեմատ կազմուած Ընտրողական ժողովս ներկայ ամսոյս 4 ին կիրակէ օր ընտրողաց ցուցակը, նոյնպէս նաեւ ընտրողաց ղիւրութեան համար ներկայանալի ընտրելեաց եռապատիկ թուով ցուցակը սոյն նստին մէջ պատրաստելով ամսոյս 5 երկուշաբթի առաւօտէն 'ի տես հանրութեան դրաւ եկեղեցւոյ բակը եօթը օր բաց մնալու պայմանաւ :

Հետեւաբար քուէարկութեան որոշեալ օրը որոշեալ ժամուն քուէտուղթ ի ներկայութեան ժողովոյ Նախագահին եւ քննչաց քննուելով՝ 30 ի չափ ընտրողներէն եկած քուէները մէկ կողմանէ ընդունեց մինչ 'ի ժամ 3 եւ քուէարկուաց ստորագրութիւնը ընտրողաց ցանկին մէջ առնուելով, որմէ ետքը քուէ չընդունեց երբէք ըստ իւր ազգարարութեան :

Ուստի ժամը 3 ին քուէտուղթ ի ներկայութեան Նախագահ Հօր եւ ժողովոյս մեծագոյն մասին եւ հանդիսատես ժողովողեան բացուեցաւ եւ քուէները համարելով որք 18 հատ էին, քուէարկուաց թղթոյն հետ բաղդատելով ամենեւին տարբերութիւն մի չգտնուեցաւ եւ ոչ իսկ մի հատի :

Աւասիկ ըստ Սահմանադրութեան քուէհամարը կատարուեցաւ, որոյ արդիւնքը արտադրեց թէ երեք անձինք քուէ ստացած էին, իսկ բացարձակ առաւելութիւն ստացող միայն է

Մեծ. Նուրեան Յովհանէս էֆ. 11 քուէ, զոր Ընտրողական ժողովս սոյն հակիրճ տեղեկագրովս հաղորդել կը փութայ առ բարձր Սրբազնութիւն Ձեր :

Մնամք խորին յարգանք եւ հնազանդութեամբ Ձերդ Սրբազնութ. անձնուէր ծառայք
1875 Մայիս 14

Նախագահ Ընտրողական ժողովոյ
ՏԵՐ ՊՕՂՈՍ ԲԱՀԱՆԱՅ
Նոյնպէս
Ի Կիւանի Թաղ. Խորհրդոյ
Արեւ-դէր Արեւ-դէր
ՄԵՐՈՆ ԳՐԻԳՈՐԵԱՆ Տ. ՋԸՊԸՃԵԱՆ

ԱՏԵՆԱՊԵՏ ՓԱՇԱ. — Կիւանի ընտրութեան օրը կը հրաւիրեմ որ խօսք առնու Հիւսար եւ Պոլսոյ միացեալ գիւղօրէից ընտրութեան տեղեկագրերուն վրայ, (Բայց ըստ որում խօսք ուղղ չկար, Ատենապետ փաշան յաւելցուց), եթէ խօսք ուղղ չկայ, իմ կողմէս ղիտողութիւն մը պիտի ընեմ :

Այս երկու թաղերը միացեալ են երեսփոխանական ընտրութեան համար, եւ երկուքն ալ միանգամայն պէտք էին ընտրել իրենց երեսփոխանը, այսինքն՝ զատ ընտրողական ժողովով բայց մի եւ նոյն օր եւ թերեւս միեւնոյն ընտրելեաց ցուցակի վրայ հրաւիրել զընտրողս 'ի քուէարկութիւն . այս այսպէս չէ եղեր . նաեւ ոչ ընտրողաց թիւը ճշդիւ նշանակած են եւ ոչ ընտրելոց առած քուէները, որով այս տեղեկագրերն ըստ իս հակիրճ եւ պակասաւոր են, Բայց որովհետեւ Նուրեան էֆէնտին պէս արժանաւոր անձ մը ընտրուած է, եւ Սրբազան Պատրիարքն ընտրելոյն քաղաքական հանգամանքը քննած եւ ծանօթացուցած է իւր ապա-

հովագրոյն, եթէ վստահութիւն ունիք ընտրողական ժողովներուն անկեղծութեան վրայ, իրենց պակասութիւնները իրենց համարակութեանը տալով կրնանք ընդունիլ եւ վաւերացընել Նուրեան էֆէնտին ընտրութիւնը :

Այսու ամենայնիւ նորէն կըսեմ, ինչպէս ասկէ առաջ ալ առիթ ունեցած էի ըսելու թէ սահմանադրական ազգի մը համար ընտրական խնդիրն առաջին կարգի ուշադրութեան արժանի խնդիր մ' է, որ եթէ մինչեւ ցարգ վերպած է ժողովոյ ուշադրութենէն, գոնէ յետ այնորիկ պէտք է որ լուրջ ուշադրութեան առարկայ ըլլայ եւ իր պակասութիւններն ուղղուին, որպէս զի ընտրողը եւ ընտրողական ժողովը օրինաւորութեամբ շարժելու նախանձով վառուին եւ ընտիր ընտրութիւններ ունենամք :

ՓԱՓԱՋԵԱՆ Ս. ԷՖ. — Կարծեմ թէ օրինական թերութիւն չկայ այդ ընտրութեան գործին մէջ . այլ թերութիւն եթէ կայ՝ տեղեկագրական թերութիւն է այն :

ԱՏԵՆԱՊԵՏ ՓԱՇԱ. — Կը տեսնէք որ Պոլսոյ գիւղի տեղեկագիրը 30 ի չափ ընտրող նշանակած է. ճիշդ թիւն ինչ ըլլալը յայտնի չէ . այս եւ ասոր պէս ուրիշ թերութիւնք գտնուելով հանդերձ, որոնք աւելի ընտրողական ժողովոց համարակութեան կարելի է տրուիլ, քան թէ ուրիշ հանգամանաց, դարձեալ կըսեմ որ ժողովը կրնայ ընդունիլ եւ վաւերացնել այս ընտրութիւնը :

ՂԱԶԱՐՈՍԵԱՆ Ք. ԷՖ. — Ես ալ այդ կարծիքէն եմ որ այս անգամ ընդունինք, եւ որիչ անգամ պակասաւոր տեղեկագիր չգալու համար Պատրիարքարանէն յատուկ հրահանգ տրուի :

ԿԻՃԻԿԵԱՆ Յ. ԷՖ. — Անցեալ անգամ, երբ Գումգափուլի եւ Կէտիկ փաշայի միացեալ թաղից երեսփոխանական ընտրութիւնները վաւերացան, դուք էիք՝ Ատենապետ փաշա, ղիտողութիւն ընող թէ կանոնական վիճակի մէջ չին եկած տեղեկագրերը, եւ թէ այսուհետեւ օրինաւորութեան ճամբու մէջ պէտք է գան եւ ընդունուին . անոր համար իբրեւ վերջին զարտուղութիւն՝ այն անգամին ընտրութիւնը ընդունուեցաւ . հետեւապէս այս անգամէն ըսկըսեալ պէտք է թերի տեղեկագրերն հտ ղրուուին :

ԱՏԵՆԱՊԵՏ ՓԱՇԱ. — Առաջին անգամին

համար իմ զիտողութիւնս Պատրիարքարանին ուղղեալ էր, ըսելով որ փոխանակ ինք տեղեկագիր բերելու՝ ընտրողական ժողովոց տեղեկագրերն ուղղակի հասրերելու է. Պատրիարքարանն ալ այս անգամ ճիշդ մեր զիտողութեան համեմատ վարուած է ընտրողական ժողովոց տեղեկագրերն ուղղակի հոս բերելով. այս անգամ ալ ընտրողական ժողովոց կուղղենք մեր զիտողութիւնը. այս այս եկած տեղեկագրերը ճշդութեամբ գրուած չեն, եւ շտապէն ըսելով եթէ եւրոպական Բարեկամներէ մէջ ըլլայինք, չէին կրնար ընդունուիլ. բայց մեր ընտրողական ժողովոց բարեմտութեանը վստահելով կրնանք եւ պէտք է որ ընդունինք, հետզհետէ կատարելագործել ապու յուսով:

ԿՐՃԻԿԵԱՆ Յ. ԷՖ.— Քանի որ պակասաւոր է ըսուեցաւ, պէտք չէ ընդունիլ:

ԻԻԹԻԻՃԵԱՆ Կ. ԷՖ.— Կը կրկնեմ Կրճիկեան էֆէնտի առաջարկութիւնը:

Սոյն զիտողութիւններէն ետեւ, Հիսար եւ Պոյաճի զիտողութեան տեղեկագրերն իրենց մանր թերութեամբ հանգերձ քուէի դրուելով, ԸՆԴՈՒՆՈՒԵՅԱՆ ժողովէն, եւ երեսփոխան հս չակուեցաւ:

Նուրեան էֆէնտի:

Բ. ԽՈՒՄԻՆԻ ԸՆԴՈՒՆՈՒՄ ԿՐՃԻԿԵԱՆ

Ամենապատիւ Սրբազան Պատրիարք Հայր Թաղիս երեսփոխաններէն Մեծ. Ազաթոն Մկրտիչ էֆէնտին Ազգային ժողովէն հրաժարած ըլլալուն, նորոգ ընտրութեան ձեռնարկելու համար Ձեր բարձր Սրբազնութեան հրամանաւ եւ ըստ նոր հրահանգի կազմուած Ընտրողական ժողովս իւր մայիս 9 ի նստին մէջ առաջին քուէարկութեան օր որոշեց մայիս 18 կիրակի, եւ ընտրողաց ցանկը, նոյնպէս նա եւ ընտրողաց զիւրութեան համար ներկայանալի ընտրելեաց եռապատիկ թուով ցուցակը, սոյն նստին մէջ պատրաստելով մայիս 11 կիրակի առաւօտէն ի տես հանրութեան դրաւ եկեղեցւոյ բակը ութ օր բաց մնալու պայմանաւ:

Ընտրող ժողովս ըստ հրահանգի Ս. Եկեղեցւոյ մէջ ստէպ ծանուցմամբ, քահանայից ազդարարութեամբ եւ լրագրաց միջոցաւ տրագորութեամբ հրատարակութիւնը բաւական

համարեց, եւ կատարեց զայս մայիս 11 կիրակի օրէն սկսեալ մայիս 17 շաբաթ օր:

Առաջին քուէարկութեան որոշեալ օրը, որոշեալ ժամուն քուէտուփը ի ներկայութեան ժողովոյ Նախագահին եւ որոշեալ քննչաց քըն նուելով Թաղ. Գործարարները դրուեցաւ եւ մէկ կողմանէ անձամբ եկած քուէները ընդունեց մինչ ի ժամ 4. եւ քուէարկուաց ստորագրութիւնը աճնուելով ընտրողաց ցանկին մէջ եւ գրեղէ գուրկ եղողներուն ըստ հրահանգի խաչանիչ զնել տալով, որմէ ետքը քուէ չընդունեց երբէք ըստ իւր ազդարարութեան:

Ճիշդ ժամ 4 ին քուէտուփը ի ներկայութեան Նախագահ Հօր, ժողովոյս մեծագոյն մասի եւ հանդիսատես ժողովրդեան բացուեցաւ եւ քուէները համբելով 44 հատ էին, 55 անձամբ եւ 9 նամակաւ բերուած. ստոնք քուէարկուաց թուոյն հետ բաղդատելով, ամենեւին տարբերութիւն մը չի գտնուեցաւ եւ ոչ իսկ մէկ հատի:

Քուէարկութիւնը միայն մէկ սեղանի վրայ կատարուելով եւ ժողովոյս կողմանէ յատուկ ընթերցողք, գրագիրք, քննիչք կարգուելով հանդիսատես ժողովուրդն ալ անկասկած մնալու համար իւր կողմանէ հակակշիռն ընող քըննիչներ գրաւ:

Քուէհամարը կատարուելէ ետքը ոչ ոք բացարձակ առաւելութիւն ստացաւ, հարկ եղաւ երկրորդ անգամ քուէարկութիւն ընել համեմատութեամբ առաւելագոյն քուէ ստացող երկու անձանց վրայ, որք էին:

Մեծ. Աթանազիէն էֆէնտի Արապեան քուէ 14
» Սարգիս » Աբրահամեան » 7

Քուէարկութեան արդիւնքը անմիջապէս ժողովրդեան ծանուցուելէ ետքը, Բ. քուէարկութեան օր որոշեց մայիս 25 կիրակի, եւ սոյն քուէարկութիւնն ժողովս որոշեց միայն ստէպ ծանուցմամբ յեկեղեցւոյ առանց լրագրաց միջոցաւ հրատարակելու:

Երկրորդ քուէարկութեան որոշեալ օրը, որոշեալ ժամուն քուէտուփը ըստ օրինի քըն նուելով, ի ներկայութեան Ընտրող ժողովոյ անգամոց եւ քննչաց, քուէարկուք անձամբ իրենց քուէները կը բերէին եւ իրենց անուան առջեւ ստորագրելէն վերջը քուէտուփը կը ձգուէր. նոյնպէս նաեւ նամակաւ եկած քուէները: Քուէարկութիւնը մինչ յորոշեալ ժամ

5, շարունակուելէն ետքը, քուէտուփը գոցուեցաւ քուէարկուաց, եւ անմիջապէս քուէհամարն սկսաւ ըստ առաջնոյն ի ներկայութեան հանդիսատես ժողովրդեան յատենի Ս. Եկեղեցւոյ:

Քուէարկուաց թիւն էր 29, 25 անձամբ եւ 6 նամակաւ առանց ամենեւին տարբերութեան:

Քուէհամարը միայն մէկ սեղանի վրայ կատարուելով ժողովոյ կողմանէ յատուկ ընթերցող, գրագիր եւ քննիչք որոշուելով, ժողովուրդն ալ իւր կողմանէ հակակշիռի համար գրագիր քննիչներ որոշեց:

Քուէհամարը կատարուելէ ետքը բացարձակ առաւելութեամբ երեսփոխան ընտրուեցաւ:

Մեծ. Աթանազիէն էֆ. Արապեան 22 քուէի ի ներկայութեան ժողովոյ քուէհամարի արդիւնքը ի գիր առնելով եկեղեցւոյ բակը դրուեցաւ ի տես հանրութեան:

Բացարձակ առաւելութեամբ ընտրուած երեսփոխանը որ է Աթանազիէն էֆ. ըստ հրահանգի Նախագահ Ս. Հայրը ծանոյց, սակայն նա իւր հրաժարագիրն ներկայացուց առարկելով որ, անձնական գործոց զբաղմունքներն չեն ներեր սոյն պաշտօնը խղճի մտօք կատարելու:

Ուստի ըստ հրահանգի համեմատական քուէարկութեան մէջէն քուէից յաջորդ առաւելութիւն ստացող Մեծ. Սարգիս էֆէնտի Աբրահամեանի Նախագահ Հայրն ծանուցանեով, եւ նա ալ ընդունեց Ս. Պատրիարքի յորդորանքը:

Ընտրող ժողովս խղճի մտօք եւ ինչպէս իւր գործառնութիւնէն յայտնի է, անթերի կատարած պաշտօնին արդիւնքը Ձեր Բարձր Սրբազնութեան հաղորդելով ի վաւերացումն:

1875 Յունիս 15 Մնամ աղօթարար
Արեւ-դէր Արեւ-դէր Ն-ի-հ-հ
ԵՂԻԱ ԵԱՀՊԱԶԵԱՆ Ռ. ԳԵՏԻԿԵՆԵԱՆ ԸՆԴՈՒՆՈՒՄ ԿՐՃԻԿԵԱՆ
ՊՈՂՈՎ ԳԱՐԴԱԳԵՏ ԻՈՒՏԱՄԵԱՆ

ԱՏԵՆԱՊԵՏ ՓԱՇԱ.— Ո՛վ որ զիտողութիւն ունի այս տեղեկագրին վրայ, թող յայտնէ:
ՂԱԶԱՐՈՍԵԱՆ Ք. ԷՖ.— Ընտրութեան մասին զիտողութիւն չունիմ. բայց տեղեկագրին վրայ խօսք մը պիտի ընեմ, Շատ երկար է տե-

ղեկագրին. եթէ ասանկ երկար տեղեկագրեր պիտի կարդանք հոս, ժամանակնիս պիտի ըսպառի, եւ միանգամայն ատենագրութիւննիս պիտի ստուարանայ:

ԻԻԹԻԻՃԵԱՆ Կ. ԷՖ.— Մայիս 20 ին երկրորդ քուէարկութիւն կատարուեր է. այսօր յուլիս 4 է, դեռ նոր կնքակայանայ հոս. ամիս ու կէս յապաղած է տեղեկագիրը. հարկաւ այս յապաղումն ալ պատճառ մը ունի, բայց ինչ որ ալ ըլլայ պատճառը, վերջապէս անկանոնութիւն մ'է. Ասկէց զատ չկրցայ հասկնալ թէ Խասգիւղի մէջ քանի քուէարկուկայ եւ քանի մասնակցեր են ընտրութեան. տեղեկագրին նայելով երկրորդ քուէարկութեան ատեն լրագրաց միջոցաւ ալ չէ ծանուցուած, այլ եկեղեցւոյ մէջ միայն ծանուցուած եղած է. ժամանակէ մը ի վեր սովորութիւն եղած է լրագրաց միջոցաւ հրաւիրել ընտրողները քուէարկութեան. ըստ իս այս ալ բաւական չէ. այլ պէտք է թաղին քարոզիչը նամակաւ իմացնէ եւ յորդորէ ժողովուրդն իր իրաւունքն ի գործ դնելու. միայն եկեղեցւոյ մէջ ծանուցանելով կամ լրագրաց մէջ հրատարակելով չըլլար. հիմա եկեղեցի գացող շատ չկայ, լրագիր կարդացող ալ շատ չկայ. անոր համար շատերը չեն կրնար իմանալ եւ իրենց իրաւունքն ի գործ դնել: Յայտնի է որ թաղին քարոզիչը թէ վարդապետ եւ թէ եպիսկոպոս, կամ անոնց բացակայութեան ատեն աւագերէցը, ասոնց որն ալ ըլլայ, երբ նամակաւ հրաւիրէ ժողովուրդն ի քուէարկութիւն, տարբեր ազգեցութիւն մը կունենայ. մեր ժողովուրդն ուրիշ յարգանք ունի եկեղեցակահանաց վրայ, չկրնար մերժել կամ անտարբեր մընալ անոնց հրաւերին առջեւ, ուստի առանց նամակի եղած հրաւերներն ապարդիւն կը մընան, եւ ասոր համար է որ ընտրութեան մասնակցողները գրեթէ ամեն տեղ խիստ քիչ են:

ԱՏԵՆԱՊԵՏ ՓԱՇԱ.— Ըսած խօսքերդ, իւթիւնեան էֆէնտի, խիստ օրինաւոր են. համբերեցի մինչեւ վերջը՝ որ չընդմիջեմ. սակայն եզրակացութիւն մը չըրիք խնդրոյն էութեան վերաբերեալ: Խնդիրն հիմա տեղեկագրին նկատարած ընտրութեանց ըստ օրինի կամ ապօրէն կատարուած ըլլալն որոշելու վրայ է. դուք զիտողութիւն կրնէք եւ առաջարկութիւն ընտրական դործողութեանց ընդհանրապէս վերաբերեալ. չնոր՝ ըրէք ասոնք զը-

բով տեղին եւ ժամանակին մեզ հաղորդել :
2 ԱՅՆԵՐ. — Քուէի զրէք :

ԱՏԵՆԱՊԵՏ ՓԱՇԱ. — Քուէի դնելէ առաջ պարտք մ'ունիմ կատարելու . այն է յայտնել թէ այս տեղեկագիրն ալ իրմէ առջի կարդացուածին նման պակասաւոր է . պակասաւոր կէտերուն մէկ քանին զրուցուեցան արդէն , որոնք եթէ ներելի ալ ըլլան , սակայն անոնցմէ աւելի ծանրը կայ , որ դեռ չը յայտնուեցաւ , եւ որ հիմա պիտի ըսեմ : Տեղեկագրին նայելով առաջին ընտրեալը չէ ընդունելու եւ յաջորդ ընտրելոյն առաջարկուելու է ընդունիլ . ասիկա մեր օրէնքին մէջ չկայ . ստոյգ է որ ժողովն իւր ներքին կանոնադրոյն տրամադրութեամբն ընդունած է որ ընտրելոյն հաճութիւնը կանխաւ առնուի . բայց թէ որ ընտրեալ մը չընդունի , ինչ ընելու է . այդ մասին բան մը տրամադրած չեն ոչ Սահմանադրութիւնը եւ ոչ ժողովին կանոնադրութիւնը . ուրեմն Ընտրողական ժողովն ռուսկից կառնու յաջորդ ընտրելոյն դիմել , թէեւ շատ չնորհակալ ենք Սրբազան Նախագահին՝ որ միջամտեր եւ համոզեր է երկրորդ ընտրելին՝ այն է Աբրահամեան Սարգիս էֆէնտին՝ ընդունիլ երեսփոխանական պաշտօնը , եւ ժողովս ալ շատ գոհ պիտի ըլլայ այսպիսի ընտիր անձի մը գործակցութիւնը վայելելով . սակայն ասկէ ետեւ պէտք չէ որ օրէնքին նախատեսութենէն դուրս մնան այսպիսի պարագաներ՝ որ մեծ ազդեցութիւն կրնան ունենալ ընտրութեանց վրայ . պէտք է ուրեմն այս կէտն որոշել :

ՌՈՒՍԻՆԵԱՆ ԷՅՅ. — Ազգային ժողովոյ կանոնադրութիւնը կըսէ որ ընտրելոց յանձնառութիւնը կանխաւ առնուած պէտք է ըլլայ : Այս ըսել չէ թէ ընտրեալին հաճութիւնը առնելու է , այլ ընտրելին հաճութիւնն ընտրութենէն առաջ առնելու է , որպէս զի ընտրութենէն ետեւ հրաժարականներ չը պատահին : Այս պարագային մէջ եթէ յանցանք կամ պակասութիւն մը կայ , Ընտրողական ժողովին չէ , այլ Վարչութեանն է , որ սխալ հրահանգ տրուեր է Ընտրողական ժողովին : Ես ուրիշ պակասութիւն մ'ալ կը նկատեմ տեղեկագրին մէջ . ընտրողաց թիւը յայտնի չէ , միայն քուէարկուացն գիտենք . բայց քանի հոգի անտարբեր մնացեր են , այդ չկայ . այդ ալ մեծ պակաս մ'է :

ՍՐԲԱԶԱՆ ՆԱԽԱԳԱՀ. — Այս ատենանին մէջ խօսող երեսփոխան էֆէնտինները չգիտեն թէ ինչ զժողովութիւններ կը կրենք երեսփոխան մը ընտրել տալու համար . Թաղական Խորհուրդներն ալ ձանձրացած են ծախք ընելով եւ յոգնելով , ինչպէս որ թէ գրով եւ թէ բերանացի դանդաւաններ կընեն ինձ , վասն զի ո՞վ որ կընտրեն՝ չեն ընդունիր :

Ռուսկիսեան էֆէնտին կըսէ թէ նախ քան զընտրութիւնն ընտրելեաց հաճութիւնն առնելու է . այդ անկարելի է , եւ ես չեմ կրնար այդպիսի հրահանգ մը տալ :

2 ԱՅՆԵՐ. — Այո , այնպէս է . չկրնար ըլլալ որ նախ հաճութիւնն առնուի եւ ապա ընտրուի :

ԱՏԵՆԱՊԵՏ ՓԱՇԱ. — Խնդրոյն պարագաները յայտնուեցան . հիմա գոհ ենք տեսնելով թէ որ կէտերուն մէջն է որ պակաս կգործուի . եւ որովհետեւ տիրող օրէնք մը ունինք՝ ուսկից չենք կրնար խոտորիլ , եւ արդէն վերաքննութեան շրջանին մէջ է այն , ուստի կրնանք վերաքննութեամբ սրբագրել եւ փոփոխել այն կէտերն , որ ընտրական օրինաց կվերաբերին եւ սրբագրութեան կարօտ են : Այս անգամ վէճի առիթ եղող ընտրութիւնը մէկ բարեմասնութիւն մ'ունի , այն է թէ ընտրեալը խիստ արժանաւոր եւ ընտրելագոյն անձ մ'է :

ՍՐԲԱԶԱՆ ՆԱԽԱԳԱՀ. — Եթէ այսպէս մանրակրկիտ քննութեան պիտի մտնենք , բոլոր ընտրութեանց տեղեկագրերն ալ քննութեան կարօտ են , վասն զի գրեթէ ամենուն մէջ ասանկ մանր մունր պակասութիւններ կան :

ԱՏԵՆԱՊԵՏ ՓԱՇԱ. — Այս քննութիւններով սա աղէկութիւնը կունենանք , որ ասկէ ետքը երեսփոխանութիւնը կարեւորութիւն կուտայ ընտրութեան հանգամանաց : Աւրեմն վերջացնելով մեր զիտողութիւնը , թէ որ ժողովը կհաճի , այս ալ քուէի կղնեմ սա բառերով . « այս անդամուան Խասգիւղի ընտրութիւնը թէ Սրբազան Նախագահին կողմէ ընտրելոյն եղած հրաւերին համար , թէ ընտրելոյն բարեմասնութեան եւ ընտիր հանգամանացը համար եւ թէ ընտրողական ժողովոյն բարեմտաբար վարուած ըլլալուն համար , թէպէտ եւ տեղեկագիրը թերի , ո՞վ որ կընդունի ձեռքը վերցնէ » :

Ժողովականք ամբողջ ձեռք վերցուցին հաճութեան :

Հետեւապէս Խասգիւղի ընտրութեան տեղեկագիրը ԸՆԴՈՒՆՈՒՅՑԱՒ Ժողովէն , եւ երեսփոխան հռչակուեցաւ :

Աբրահամեան Սարգիս էֆէնտին :

Գ. Սահմանայ ընտրութեան քուէի-քէլ :

Ամենապատիւ Սրբազան Պատրիարք Հայր Նախագահ Ազգ. Վարչութեան Քաղ. Ժողովոյ .

Ըստ հրամանի Ձեր բարձր Սրբազնութեան , եւ ըստ հրահանգաց Ազգ. Վարչութեան , Թաղիս հրաժարեալ 6 երեսփոխանաց տեղ նոր ընտրութիւն կատարելու համար , Ընտրողական ժողովոյ կազմութեան ձեւնարկելով , ներկայ Թաղական Խորհրդոյս վրայ , թաղիս պատուաւոր բնակիչներէն հետեւեալ 6 անձինքն հրաւիրեց՝ որք են .

- 1. Բարէլ ազա Սաքայեան
- 2. Սարգիս » Յովսէփեան
- 3. Պօղոս » Քիրէճճեան
- 4. Մ. Յակոբ » Փուլճեան
- 5. Յակոբ » Երէցեան
- 6. Մկրտիչ » Ալլըճեան

Եւ ըստ այսմ Ընտրողական ժողովս գումարեցաւ 12 անդամոց բաղկացութեամբ ի 16 մարտի ընդ նախագահութեամբ Արժ. Քարոզիչ Հօր՝ յորում Ընտրողական ժողովոյ Ա. նիստըն ըլլալով , բացարձակ հաւանութեամբ ժողովոյ , մեծապատիւ Բարէլ ազա Սաքայեան ատենապետ՝ եւ Սարգիս ազա Յովսէփեան ատենադպիր ընտրուեցան :

Ընտրողական ժողովս Ձեր Սրբազնութեան ազգարար նամակն եւ Ազգ. Վարչութեան նոր հրահանգն ինկատի առնելով , անմիջապէս 6 հրաժարեալ երեսփոխանաց տեղ՝ նոր ընտրութիւն ընելոյ համար 18 արժանաւոր անձանց անուանքն որոշեց համաձայնութեամբ , որոց հմտութիւնը , ազգասիրութիւնը , եւ անձնական արժանաւորութիւննին վկայեալ էր ըստ 67—68 յօդուածոց Ազգ. Սահմանադրութեան :

Հետեւաբար թաղիս ընտրողաց ցանկն ի քննութիւն առնելով , թէ հանգուցեալ թէ բացակայ անձինքը զեղչելէ ղկնի , ուրիշ տեղէ եկող եւ բնակութիւն հաստատողներն աւելցընելով , գտաւ ընդ ամենը 333 ընտրող :

Ընտրողական ժողովս իւր Բ. նիստն ըրաւ ի 25 մարտի , յորում ամենայն ինչ ի պատրաստի ըլլալով , թէ ընտրողաց ցանկն եւ թէ 18 ընտ-

րելեաց ցուցակը անմիջապէս եկեղեցու բակը ի տես հասարակութեան զրաւ 8 օր մնալու պայմանաւ , եւ որպէս զի քուէարկութիւնը ի 30 մարտի կիրակի օր կատարուի , եւ թաղիս ընտրողներն հրաւիրուին ի քուէարկութիւն որոշեցաւ լրագրաց միջոցաւ ծանուցումս տրուիլ թաղեցոց , եւ հրատարակեցաւ պէտք եղած ազգագիրն ի ձեռն Մասիս , Օրագիր , Փունջ եւ Մանզումէ լրագրոց :

Ընտրողական ժողովս իւր Գ. նիստն ըրաւ ի 30 մարտի , ի ն. Վարչութեան վարժարանին ընդ նախագահութեամբ Քարոզչին ի ժամ 2 , եւ քուէտուփին դատարկութիւնը քննուելով ի ներկայութեան ժողովոյս , փակեցաւ , եւ մինչ ի յորոշեալ ժամն 3 , քուէարկութեան թաղեցոցմէն միայն 20 հոգի անձամբ եւ 15 հոգի նամակաւ ներկայացուցին իրենց քուէթղթերն , զորս ի քուէտուփն ամփոփելով , ժամ 5 ին քուէտուփը ի ներկայութեան քննչաց բացուելով , գտնուեցաւ ճիշդ 35 քուէթուղթ ըստ թուոյ քուէարկուացն , եւ քուէհամարը կատարուելով բացարձակ առաւելութեամբ երեսփոխան ընտրուեցան հետեւեալ անձինքն , որք են՝

- 1. Վսեմ. Գրիգոր էֆ. Օտեան քուէ 20
- 2. Մեծ. Գասպար » Ֆրանկիւլ » 20
- 3. » Ալիքսան » Պէչիբեան » 19
- 4. » Յակոբ » Ամասեան » 19
- 5. » Մինաս » Ճաֆճաֆեան » 19

Իսկ համեմատական քուէարկութեան մնացին երկու հաւասար քուէընկալք

Մեծ. Անդրանիկ պէյ Կրճիկեան քուէ 16
» Կոստանդ էֆ. Կոստանդեան քուէ 16

որոց վասն կրկին քուէարկութիւնը ըլլալու համար ի 6 ապրիլի հետեւեալ կիրակի օրն , երկու ընտրելեաց ցուցակն ի տես ժողովրդեան տրուեցաւ եւ ի ձեռն լրագրաց կրկին ազգարարութիւն եղաւ թաղեցի ընտրողաց :

Ի 6 ապրիլի Ընտրողական ժողովս իւր Դ. նիստն ըրաւ , եւ որոշեալ ժամ 1 էն մինչեւ ի 4 քուէարկութիւնը կատարուելով , ընդ ամենը 25 քուէթուղթ ստացաւ յորոց 15 հոգի անձամբ , եւ 10 հոգի նամակաւ բերին իրենց քուէներն , եւ քուէհամարն ըլլալով , վեցերորդ երեսփոխան , Մեծ. Կոստանդ էֆ. Կոստանդեան 21 քուէ ստանալով , բացարձակ առաւելութեամբ ընտրուեցաւ :

Հետեւաբար ընտրեալ 6 երեսփոխանաց

Թաղական Խորհրդոյ կողմանէ յատուկ հրաւիրագրերն զրկուելով, երեսփոխանական պաշտօնն ընդունելու հաւանութիւննին խնդրուեցաւ, յորոց Վսեժ. Գրիգոր էֆ. Օսեան եւ Կոստանդ էֆ. Կոստանդեան եւ Մեծ. Գասպար էֆէնտի Ֆրանկլիւեան, իրենց հրաժարագիրը մատուցին:

Իսկ Մեծ. Յակոբ էֆ. Ամասեան, Մինաս էֆ. Ճաֆճաֆեան, եւ Ալիքսան էֆ. Պէշիրեան, շնորհակալութեամբ ընդունեցին նոյն պաշտօնը ի պատիւ ազգութեան:

Արդ ընտրողական ժողովն՝ 6 երեսփոխանաց տեղ, միայն 5 երեսփոխանն ընտրելու եւ հաճութիւննին ստանալու յաջողեցաւ, իսկ միւս հրաժարելոց տեղ՝ ուրիշներն ընտրելու հրամանը Ձեր Սրբազնութենէն սպասելով, ի ներկայս կմատուցանելք սոյն տեղեկագիրն ի վաւերացումն երկոց երեսփոխանացն, մնամբ խորին ակնածութեամբ:

26 Մայիս 1875

Թղկ. Խորհ. Ս. Գէորգ Եկեղեցւոյ Սամաթիա

ի գիմաց. Նախագահի

Ընտր. ժողովոյ

ՅՈՎԱՆՆԵՍ ԲԱԷ. ԵԱԷՊԱՋԵԱՆ

Արեւ-դէր

Արեւ-դէր

Ս. ՅՈՎԱՆՆԵՍ

ԲԱԲԷԼ ՍԱԲԱՅԵԱՆ

Թաղական Խորհրդոյ

Արեւ-դէր

Արեւ-դէր

Գ. ՏԷՐ ՊՕՂՈՍ

Ե. ԲՈՒՆԵԱՆ

Ատենապետ փաշան սոյն տեղեկագրին վերայ ալ ի դիտողութիւն հրաւիրեց երեսփոխանները:

ՂԱԶԱՐՈՍԵԱՆ Ք. ԷՖ.— Ընտրողական ժողովն ընտրեալները հրաւիրեց է. կարծեմ թէ ասիկա իւր պարտաւորութիւնը չէր ընել. այլ տեղեկագիրը Վարչութեան գալէն եւ վաւերացուելէն ետեւ Վարչութեան կը մնար այդ հրաւերն ընել:

ԱՏԵՆԱՊԵՏ ՓԱՇԱ.— Ստոյգ է. այս պարագաներուն ամենն ալ որոշուելու են. առ այժմ կստիպուինք կազն ի կազն ընթանալ այս բաներուն մէջ, քանի որ օրէջքնիս դեռ անկատար է եւ կատարելագործուելու պէտք ունի. այսու ամենայնիւ Սամաթիոյ կատարած

ընտրողական գործողութիւնները գոհացուցիչ կը տեսնեմ: Միայն ցաւալի կէտ մը կը նշմարեմ, այն է թէ 333 ընտրողներէն միայն 35 քուէ եկած է, որով ըսել կըլլայ թէ 10 էն մէկը հազիւ ընտրութեան մասնակցած է. ասիկա Սամաթիոյ պէս թաղի մը ազգայնոց՝ որ նախանձախնդրութիւն ունին ազգային գործոց մասին, կհամարձակիմ այս Գիւանին վրայէն ըսել թէ քիչ ամօթ չէ:

ՍՐԲԱԶԱՆ ՆԱԽԱԳԱԷ.— Ժողովուրդը յանցանք չունի. ընտրութիւն ընելէ ձանձրացած է. զի գրեթէ ամիսն անգամ մը երեսփոխան ընտրելու կհրաւիրուի:

ՓԱՓԱԶԵԱՆ Ս. ԷՖ.— Թող բարձուի երեսփոխանական ընտրողութեան պայման դրուած 75 դուրուշի տուրքը, որպէս զի ժողովուրդը փոյթ ունենայ ընտրութեան մասնակցելու:

ԿՐՃԻԿԵԱՆ Յ. ԷՖ.— Քանի որ ընտրութեանց քննիչ կամ գործադիր յանձնաժողով մը կայ, պէտք է որ քննէ եւ հասկնայ ընտրութեանց մէջ եղած պակասութիւնքն ու անոնց պատճառները:

ԱՏԵՆԱՊԵՏ ՓԱՇԱ.— Ձեր յիշած յանձնաժողովն Ազգ. Վարչութեան կողմէ դրուած է. այս ժողովը չճանչնար դայն եւ անոր հետ յարաբերութիւն մը չունի:

ԿՐՃԻԿԵԱՆ Յ. ԷՖ.— Կրնայ ըլլալ որ նոյն իսկ Վարչութեան կողմէն զրկուած ընտրութեանց հրահանգը պակասութիւններ ունենայ. ինչպէս որ քիչ մը առաջ Խասգիւղի տեղեկագրին առթիւ դիտել տուիք թէ յաջորդին ընտրութիւնը օրինաց դէմ է:

ԱՏԵՆԱՊԵՏ ՓԱՇԱ.— Այո, ասիկա պակասութիւն մ'է, եւ Վարչութիւնը կրնայ այդ մասին ժողովէս հրահանգ խնդրել:

Սոյն դիտողութիւններէն ետեւ, Սամաթիոյ ընտրութեան տեղեկագիրն ալ քուէի դըրուելով, ԸՆԴՈՒՆՈՒԵՑԱԻ ԺՈՂՈՎէն, եւ երեսփոխան հոշակուեցան

Ամասեան,	Յակոբ	էֆէնտի
Ճաֆճաֆեան	Մինաս	»
Պէշիրեան	Ալիքսան	»

Դ. ԵԿԵՉԵՅԻՆԷ ԵՐԵՎԱՆԻՆԵՅ ԸՆՏՐՈՒԹԵԱՆ ԴԵՒԷՅԻՒՅԷ

Ամենապատիւ Սրբազան Պատրիարք Հայր Ազգային ժողովէն պակասեալ երկոց եկե-

ղեցական երեսփոխանաց տեղ նորերն ընտրելու համար՝ ազգային կրօնական ժողովէն ընտրեալ Քննիչ ժողովս պաշտօն ունէր հսկել եկեղեցական ընդհանուր ժողովոյ քուէարկութեանն, քուէհամարը կատարել եւ արդիւնքը տեղեկագրել:

Արդ առաջին քուէարկութիւնը կատարուեցաւ յազգային Պատրիարքարանի՝ ի 12 յուլիս ամսոյ, որ ատեն (187) հարիւր ութսուն եւ եօթը հրաւիրեալ եկեղեցականներէն (148) հարիւր քառասուն եւ ութը Հարք մասնակցեցան քուէարկութեան:

Բայց քանզի նոյն առաջին քուէարկութեան մէջ ոչ ոք չընտրելեաց բացարձակ առաւելութիւն ստացաւ, ուստի ազգային կրօնական ժողովոյ որոշմանն համաձայն այսօր երկրորդ անգամ եկեղեցական Ընդհանուր ժողով գումարեցաւ, ուր — վեց նորեկ եկեղեցականօքն հանդերձ — (195) հարիւր իննսուն եւ երեք հրաւիրեալ եկեղեցականներէն՝ միայն (147) հարիւր քառասուն եւ եօթը Հարք մասնակցութեամբն կատարուած համեմատական քուէարկութեան արդիւնքը ցոյց տուաւ, թէ հետեւեալ երեք եկեղեցական Հարք՝ ազգային երեսփոխան ընտրեցան քուէից առաւելութեամբ, որք են

1. Տ. Եզնիկ վարդապետ Ապահունի 117
2. Տ. Սահակ քահանայ Տ. Սարգսեանց 112
3. Տ. Պօղոս վարդապետ Խօլտամեանց 68

Արդ Քննիչ ժողովս իւր պաշտաման աւարտեալ լինելն խոնարհաբար յայտնելով բարձու Սրբազնութեանդ՝ իւր այս տեղեկագիրը կը ներկայէ հաղորդել ուր որ անկ եւ օրէն իցէ, ի պարտապատշաճ տնօրէնութիւն:

26 յուլիս 1875
Պատրիարքարան Հայոց
Ի Գում-գափու

Նախագահ Քննիչ ժողովոյ
ԳՐԻԳՈՐ ԵՊԻՍԿՈՊՈՍ

Գիւան Քննիչ ժողովոյ
Արեւ-դէր
ԵԶՆԻԿ Վ. ԱՊԱՆՈՒՆԻ
Մ. Վ. ԽՅՄԻՐԼԵԱՆ

Անդամք Քննիչ ժողովոյ
ՍԱՐԳԻՍ Վ. ԽԱՐԱԲԵՂՈՒ ԽԱՉՍՈՒՐ Ք. Տ. ԳԱՐԻԷԼԵԱՆ
ԶԱԲԱՐԻԱ Վ. ԶԻՄԵՐԻԹՅԱՆ ՊՕՂՈՍ Վ. ՆԱԲԱՆԵԱՆ
ԳԱՐԻԷԼ ԲԱԷԱՆ

ԱՏԵՆԱՊԵՏ ՓԱՇԱ.— Վերջապէս սոյն տեղեկագրին վրայ ալ եթէ դիտողութիւն ունեցող մը կայ, կը հրաւիրեմ որ իւր դիտողութիւնը յայտնէ: Եթէ չկայ, իմ կողմէս փոքրիկ դիտողութիւն մը պիտի ընեմ: Այս տեղ ալ նոր քննիչ ժողով մը կընէ դէմերնիս. եկեղեցական երեսփոխանաց ընտրութեան մասին՝ Սահմանադրութիւնն ըստ 637- յօդուածոյ կը տրամադրէ որ՝ « Կ. Պօլսոյ մէջ գտնուող բոլոր եկեղեցականք Պատրիարքի հրաւիրանօք ապրիլ ամսոյ վերջն որոշեալ տեղ մը կը գումարուին, եւ զազանի քուէարկութեամբ ու քուէից բացարձակ առաւելութեամբ Ազգային ժողովոյ եկեղեցական անդամները կը տրեն . . . »: Սոյն յօդուածին հակառակ կը տեսնենք ընտրութեան տեղեկագրին մէջ որ կրօնական ժողովը միջամտեր է, նա ալ քննիչ ժողով մը գրեթէ թէեւ ասոնք Սահմանադրութեան սկզբանց գայելու չափ մնասակար ալ չերեւան, սակայն քանի որ Սահմանադրութեան տառին հակառակ են եւ վարչական ժողով մը օրէնդիր ժողովոյ ընտրութեան միջամտելով, կրնայ ապօրինաւորութեան առիթ տրուիլ, պէտք է զգուշանալ, ինձ համար միշտ պէտք է կատարելապէս օրինաց համեմատ ընթանալ:

Այս դիտողութեամբս հանդերձ քուէի պիտի զնեմ եկեղեցական երեսփոխանաց ընտրութեան տեղեկագիրը:

Հետեւապէս քուէի դրուելով եկեղեցական երեսփոխանաց ընտրութեան տեղեկագիրն ԸՆԴՈՒՆՈՒԵՑԱԻ ԺՈՂՈՎէն, եւ երեսփոխան հրահակուեցան

Տ. Եզնիկ վարդապետ Ապահունի
Տ. Պօղոս » Խօլտամեան
Տ. Սահակ քահանայ Տէր Սարգսեան

Սոյն քուէարկութեանէն ետեւ Տ. Մատթէոս վարդապետ Ատենապետ փաշային դիտողութեան պատասխանելու համար խօսք տանրով, յայտնեց թէ ինչպէս որ Սահմանադրութեան 637- յօդուածը կը տրամադրէ, ճիշդ տնոր համեմատ Սրբազան Պատրիարքն ալ հրաւիրած է Պօլսոյ մէջ գտնուող եկեղեցականները չընտրութիւն եկեղեցական երեսփոխանաց. եւ որովհետեւ Սահմանադրութեան նոյն յօդուածին մէջ ընտրողական ժողով կազմելու խօսք չկայ, Սրբազան Պատրիարքը կրօն. ժո-

զովին յանձնեմ է ընտրութեան գործին հսկողութիւնը . իսկ կրօն . ժողովն ալ զբաղեալ ըլլալուն պատճառաւ մէկ երկու անձանց յանձնեմ է եւ այսպէս կատարուեմ է եկեղեցական երեսփոխանաց ընտրութիւնը :

Եւ Հուսկ յետոյ երեսփոխանական ընտրութեանց մասին Սրբազան Պատրիարք Հօր մատուցած ապահովութեան ծանօթագիրն ալ կարգացուելով , ԸՆԴՈՒՆՈՒՆԵՑԱԻ Ժողովէն . ահաւասիկ .

Վսեմափայլ Ատենապետ

Ազգ . Երեսփոխանական ժողովոյ .

Ազգային ժողովէն պակասած երեք եկեղեցական երեսփոխանաց , նոյնպէս Սամաթիոյ , Խասգիւղի , Հիսար եւ Պոյաճի գիւղի պակասած երեսփոխանաց տեղ նոր ընտրութիւնք կատարուելով , Պատրիարքարանս քննեց ընտրելոց սահմանադրական հանգամանքը , եւ Սահմանադրութեան համկմատ գտաւ :

Ահաւասիկ յիշեալ նորընտիր երեսփոխանաց անուանքը .

Եկեղեցականք

- Տ . Եղնիկ վարդապետ Ապահունի
- Տ . Պօղոս վարդապետ Խօյտամեան
- Տ . Սահակ քահանայ Տ . Սարգսեան

Աշխարհականք


- | | |
|--|---------------------|
| Յակոբ էֆէնտի Ամասեան | } Սամաթիոյ
թաղէն |
| Մինաս » ճաֆճաֆեան | |
| Ալիքսան » Պէշիբեան | |
| Սարգիս » Աբրահամեան Խասգիւղի » | |
| Յովհաննէս » Նուրեան Հիսար եւ Պոյաճի գիւղ միացեալ թաղէն | |

Վերոյիշեալ ընտրելոց յանձնառութիւնն ալ ապահովուած ըլլալով , ընտրողական ժողովոյ տեղեկագրերուն հետ սոյն ծանօթագիրս կմատուցանեմ Ազգային ժողովոյդ ի վաւերացումն :

4 Յուլիս 1875 Պատրիարք Կ . Պօլսոյ ՆԵՐՍԷՍ ԱՐՑԵՊԻՍԿՈՍ

ԻԹԻՒՆԵԱՆ Կ . ԷՖ . — Կառավարկեմ որ երեսփոխանական ընտրութեանց գործադրութեանը համար Տեսուչ յանձնաժողով մը կարգուի Ազգ . ժողովոյս կողմէն , որ պաշտօն ունենայ ընտրական գործողութեանց հսկել եւ պէտք եղած հրահանգներն ալ իւր կողմէն զբրկել ընտրողական ժողովոց :

ԱՏԵՆԱՊԵՏ ՓԱՇԱ . — Առաջարկութիւննիդ պէտք է ըստ կանոնի զբով տայք Դիւանին , որպէս զի ժողովին ուշադրութեան յանձնուի :



Օ Ր Ա Կ Ա Ր Գ

Վերաբնութեան Սահմանադրութեան . — Տեսուչն ինչպէս զի ժողովին ուշադրութեան յանձնուի :

ԱՏԵՆԱՊԵՏ ՓԱՇԱ . — Խօսքն Երեսփեան էֆէնտիին է :

ԵՆՈՒՍՈՒՅԵԱՆ Տ . ԷՖ . — Ազգային Սահմանադրութեան վերաքննութեան ընդհանուր ըսկըզանցը վրայ խօսելու համար ճիշդ այնպիսի պահու մը մէջ բեմը կեղնեմ , ուր մեր Սահմանադրութեան պինդ գլխաւոր սկզբունքներէն մէկն , այն է երեսփոխանական ընտրութեան խնդիրը գրեթէ Յ քառորդէ ի վեր վիճարանութեան նիւթ եղաւ : Ժողովը չը ձանձրացնելու համար , ըստ որում այս խնդրոյն վրայ ինձմէ առաջ խօսողները շատ կէտեր շօշափեցին , իմ կողմէս մի միայն իբր յաւելուած այն պարագաները պիտի մէջ բերեմ , որ թերեւս կամ խօսողներուն մտքէն վրիպեցան , եւ կամ չտուին այնքան կարեւորութիւն՝ որքան պէտք էր :

Կարծեմ 15 տարի է որ Սահմանադրութիւն ունեցանք , եւ ինչպէս ըսողներ եղան՝ 12 տարի է որ կվերաքննենք զայն , եւ այս վերաքննութեան մէջ ըսուեցաւ որ նախ պիտի մտածենք թէ որո՞նք են այն սկզբունքներն՝ որ վերաքննութեան կարօտ են : Արդէն քանի քանի յանձնաժողովներ այդ վերաքննութեան կարօտ կէտերն երեւան հանած եւ բերած են հոս . այնպէս որ նորէն զանոնք փնտռելու պէտք չկայ . ես կկարծեմ թէ եւ ոչ մէկ կարեւոր կէտ մը կայ որ դուրս մնացած ըլլայ . միայն թէ անոնց կարեւորութեան աստիճանն որոշելու մասին խօսող չեղաւ : Վերաքննիչ յանձնաժողովը բերաւ իւր ծրագիրն , որուն վրայ խօսող ատենաբանք բաւական մեկնութիւններ տուին , եւ ոմանք յատենաբանից կարծեցին իսկ թէ իրարու հակառակ գաղափարով ըմբռնած են վերաքննութեան խնդիրը . սակայն ես ուշադրութեամբ կարդալով կը տեսնեմ որ սկզբանցը վրայ գրեթէ ամենն ալ իրարու համաձայն են փոքրիկ տարբերութեամբ :

Նախ խնդիր յուղուեցաւ թէ Սահմանադրութիւնն ինչ կերպով վերաքննելու է . միթէ առ երեւոյթս կարեւոր եղած կէտերը քննելով անցնիլ եւ մնացածներն ալ հետզհետէ քանի որ հարկ մը երեւան ելնէ՝ վերաքննել պէտք է , եթէ ոչ կատարեալ կերպով վերաքննելով ամեն ըսելիքնիս միանգամայն ըսել եւ լմնցնել պէտք է . Տեսնոք իմ , ես կկարծեմ որ վերաքննութեան բառն ամեն ատեն ազգի մը մէջ արտասանելն աղէկ բան մը չէ . թէ եւ իրաւ է որ ազգերն ալ կարող չեն մէկ օրուան մէջ կատարեալ օրէնք մը շինել , սակայն եւ այնպէս չեմ տեսած ժողովուրդ մը՝ որ այսպէս ամեն տարի շարունակ վերաքննութեամբ զբաղի : Ուստի շատ աղէկ ըսաւ նախորդ նստին մէջ Փափաղեան էֆէնտին թէ Վերաքննիչ Յանձնաժողովը փորձառութեան արդեամբ դժուարագործադրելի գտած կէտերուն ամենն ալ ցուցած է , եւ թէ ինչպէս Տ . Մատթէոս վարդապետն ալ յայտնեց , շատ կէտեր ալ կան՝ որ կանոնադրական ըլլալով սահմանադրական կէտերուն հետ խառնուած եւ շփոթած են Սահմանադրութիւնը : Ինչի կթուի որ ազգի մը համար Սահմանադրութիւն մը միանգամ հաստատուելէն ետեւ , անոր հիմնական կէտերն անփոփոխելի են , միայն կանոնադրական կամ հրահանգական կէտերն են փոփոխելի . բայց Սահմանադրութեան սկզբունքները միշտ փոփոխելի ցուցնելը քաղաքականութիւն չէ . որովհետեւ ազգերը կառավարելու համար օրէնքը պատուանդան մ'է , որու վրայ հաստատուած է վարչական մեքենան , շատ ատեն կրնայ գտնուիլ 5 կամ 10 երեսփոխան որ համաձայնելով իրենց մէջ Սահմանադրութեան այս կամ այն կէտերու մասին փոփոխութիւն առաջարկեն , եւ ժողովը թէ ընդունի եւ թէ մերժէ այն առաջարկեալ փոփոխութիւնը , կպարտաւորի անով զբաղիլ , եւ ուրիշ շատ կարեւոր բաներու մասին անտարբեր մնալ : Ամենուս ալ պարագն է այս պարագային լաւ ուշադրութիւն ընել եւ անտարբերութիւնը մէկդի ձգել : Տեսնոք երեսփոխանք , հարկ չէ ըսել թէ ամենս ալ գիտենք որ վերաքննութեան խնդիրը 12 տարիէ ի վեր կտեսէ . ասոր մէջ զարմանալի գաղափար մը չկայ , բայց ինչո՞ւ համար չենք կրնար աւարտել . վերաքննութիւնն այն ատեն երեւան եկած է երբ ազգն ուրիշ խնդրով զբաղած էր , այնպիսի

խնդրով՝ որ վէճ ծնած եւ բաժանում յառաջ բերած էր . ըսել է թէ Վերաքննութեան խնդիրը յուղեալ ժամանակի մէջ ծագած է : Իսկ այժմ քանի որ շնորհիւ ներկայ Սրբազան Պատրիարք Հօր խաղաղութիւնն Ազգին նշանաբանն եղած է եւ Ազգը բոլորովին խաղաղութիւն կվայելէ , այնպէս որ մէկը միւսին դէմ ըսելիք մը չունի , ի բաց առեալ կարծեաց տարբերութիւնն , որ միշտ կայ ու կկենայ եւ պէտք է որ կենայ , ըստ որում որչափ մարդիկ այնչափ կարծիք կրնան ըլլալ , բայց չկայ այնպիսի խնդիր կամ սկզբունք մը՝ որ պառակտում յարուցած եւ մէկը միւսէն բաժնած ըլլայ . քանի որ՝ կրտսեմ , այսպէս խաղաղութեան ժամանակէ , լաւ կըլլայ որ Սահմանադրութեան մէջ փոփոխութեան կարօտ որքան կէտեր կան՝ ամենը մէջ տեղ բերուին , եւ նկատողութեան առնուելով՝ նոր եւ կատարեալ Սահմանադրութիւն մը շինուի : Եւ ինչպէս որ Տ . Մատթէոս վարդապետ ըսաւ անցեալ նստին եւ Փափաղեան էֆէնտին ալ կրկնեց թէ ժամանակ պիտի գայ՝ յորում փոխակ 99 յօդուածով Սահմանադրութիւն մ'ունենալու , 10 կամ 12 յօդուածով պիտի կրնանք ունենալ , ես կը կարծեմ թէ հիմա է այդ պատեն ժամանակը . ասկէ աւելի յարմար ժամանակ չկրնար ըլլալ Սահմանադրութիւննիս պարզելու . պարզեմք ուրեմն Սահմանադրութիւնը , որոշելով այն կանոնադրական կէտերն՝ որ անոր մէջ խոնկալ են . որքան պարզ ըլլայ մեքենային ընթացքը , անոր դէմ արգելք յարուցանող խոչընդոտներն ալ այնքան քիչ կըլլան :

Ահաւասիկ Սահմանադրութիւնը մասնական թէ ընդհանուր կերպիւ վերաքննելու կէտին վրայ իմ կարծիքս բովանդակ յայտնեցի . ուստի կ'եզրակացնեմ թէ ամեն ատեն վերաքննութիւն կարենալ ըլլալու գաղափարը պէտք է իսպառ ջնջել եւ ընդհանուր վերաքննութեամբ վերջացնել այս մեծ գործը :

Երկրորդ՝ գալով այն խնդրոյն թէ որոնք են վերաքննութեան կարօտ կէտերն , այս մասին ես երկար չպիտի խօսիմ . որովհետեւ արդէն խօսողներն ընդարձակօրէն պարզարանեցին այս խնդիրը : Տարակոյս չկայ թէ որքան ալ մեր Սահմանադրութիւնն ամեն մասամբ գործադրելի ըլլալուն վրայ պնդողներ ըլլան , դարձեալ ընտրական խնդիրը վերաքննութեան անհրաժեշտ պէտք ունի : Թէ ինչ եղանակաւ

պէտք է ընել այս խնդրոյն վերաքննութիւնն , այս կէտը երկրորդական համարելով , բաւական է գիտնալ թէ սկզբունքը թերի է եւ կատարելագործութեան կարօտութիւն ունի : Այս կէտն ընդունուելէ ետեւ , երբ մանրամասնութեանը վրայ վիճարանութիւն ընել հարկ ըլլայ , դիւրին է անոր եղանակներ որոշելը : Իմ մասնաւոր կարծիքս այս պարագային մէջ կըրնամ յայտնել սա կերպով թէ մեր Ազգին համար երկրորդ աստիճանաւ ընտրութեան սկզբունքն օգտակար է միշտ . այս սկզբունքը Սահմանադրութեան ոգին չտարամերժեր : Անցեալ նստին Փափաղեան էֆէնտին իւր ատենաբանութեան մէջ Ռուսիոյն էֆէնտին առաջարկած ընտրական եղանակին դէմ խօսելէ ետեւ , վերջապէս ինք ալ ընդունեց կանոնադրական խնդիր է ըսելով : Անուղղակի ընտրութիւնը Սահմանադրութիւնը չտարամերժեր , ինչպէս գաւառներուն անուղղակի է . սկզբունքը պէտք է գաւառներէն առնունք , քանի որ Սահմանադրութիւնը չմերժեր . իրացնէ ասոնք զարտուղութիւններ են . բայց ամենէն մեծ ազգաց մէջ ալ ասանկ զարտուղութիւններ կրնան ըլլալ . միշտ գաւառներն ու մայրաքաղաքներն իրարմէ կտարբերին . վերջապէս Բրէտէն խնդիր է . այսօր ելնել ըսել գաւառաց թէ դուք փոխանակ 40 երեսփոխանաց 100 տուէք , եւ Պոլիս 40 տայ , անոնց վրայ բեռ մը դնել է որ շին կրնար տանիլ . թերեւս ժամանակը գայ եւ գաւառաց վիճակը փոխուելով այս կէտն ալ շտկուի . բայց Սահմանադրութեան սկզբունքը պէտք է ամենուն համար ալ միեւնոյն լինի . ինչպէս որ գաւառաց երեսփոխանները Գաւառական ժողովները կուտան , մայրաքաղաքիս համար ալ պէտք է ասոր պէս բան մը որոշել , Պոլիսն ալ զատ գաւառ մը նկատելով : Ռուսիոյն էֆէնտին Պոլիսը քանի մը շրջանակներու բաժնել առաջարկեց . իսկ Փափաղեան էֆէնտին անկարեւոր դատեց այս առաջարկութիւնը

ՓԱՓԱՋԵԱՆ Ս. ԷՖ.— Դուք ինչ կըսէք . ձեր առաջարկութիւնն ալ պարզեցէք :

ԵՆՍՈՒՅԵԱՆ Ս. ԷՖ.— Ես մասնաւորութեանց մէջ չեմ մտնիր . այս երեք եղանակներէն որը լաւ է , որը փոխել կամ ջնջել պէտք է , ասոնք երկրորդական կհամարիմ . կուզէք Պոլիսը զատ գաւառ ըրէք , կուզէք գաւառները միացուցէք . ասոնց մէջ մեծ տարբերու-

թիւն կայ . բայց ես հիմա չեմ ուզեր աւելի կարծիք մը յայտնել այս մասնաւոր պարագաներուն վրայ եւ կթողում այն պահուն՝ երբ մանրամասնութեանց համար վիճարանութիւն բացուի . միայն սկզբունքին վրայ խօսելով կըսեմ թէ արդի ձեւը թերի է եւ պէտք է որ կատարելագործուի :

Երրորդ վերաքննութեան մէջ ուրիշ գըլխաւոր կէտ մ'ալ կտեսնեմ նկատողութեան արժանի : Որ եւ է երկրի մը կառավարութեան մէջ մասնաւոր սահմանադրական ըսուած ատեն , երկու զօրութիւն կամ իշխանութիւն կգտնուի . մէկն է օրէնսդիր իշխանութիւն եւ միւսը՝ գործադիր իշխանութիւն : Այս երկու տեսակ իշխանութեանց իրարու հետ ունենալիք յարաբերութիւնը ներդաշնակութեան մէջ գնելը բուն օրէնսդիրն ճարտարութեան ապացոյցն է . այնպիսի հակակշիռ մը գտնել որ ասոնք զիրար չդիմակալեն : Ասիկա ալ խնդիր մ'է . բայց այսօրուան համար խնդիրն այն չէ թէ գործադիր եւ օրէնսդիր իշխանութիւնք իրարմէ բաժնուած ըլլալու են թէ ոչ երկուքն ալ միեւնոյն անձանց վրայ մնալու են : Տարակոյս չկայ թէ Սահմանադրութեան սկզբամբ ասոնց բաժանումը պէտք է . ապա թէ ոչ՝ միապետական իշխանութիւն կդառնայ : Մեր Սահմանադրութիւնն ըստ իմ կարծեաց այս բաժանումն ընել ուզեր է , բայց տեղ մը այս երկու իշխանութեան իրարու հետ ունեցած ներդաշնակութիւնը չփոթեր է : Ըսինք թէ օրէնսդիր իշխանութիւնը գործադիր իշխանութեանէն զատուած պէտք է ըլլայ . եթէ ասանկ չըլլայ , ինչ եղանակաւ գործադիր իշխանութիւն կրնայ ըլլալ . ինչ է պաշտօնէութեան պատասխանատուութիւնը . մէկ թէ երկու ժողովոց պէտք է օրէնսդիր իշխանութիւն վարել . երբ օրէնսդիրն եւ գործադիրն մէջ վէճ մը ծագի , այն ատեն վերջին խօսքն որուն պիտի ըլլայ : Ասոնք այնպիսի կէտեր են , որ բոլոր սահմանադրական ազգաց մէջ խորհրդածութեան նիւթ եղած եւ ասոնց վրայ հիմնուած են իրենց օրէնսդիրութիւնը : Փորձով ասոնք քանիցս թէ իշխանութեանց բաժանման խնդիրը մեր Սահմանադրութեան մէջ կանխատեսուած չըլլալէն այնպիսի յուզումներ յառաջ եկան որ մինչեւ պետական հարուած բերելու առիթ եղաւ : Պետական հարուած ըսի չէի կրնար ուրիշ անուամբ արտասանել . բայց

Տեսնաք իմ , բառը թող չխրտչեցնէ զձեզ . արդէն ըսի թէ խաղաղ ժամանակ է հիմա . մեք պէտք է գիտնալք թէ քանի որ իշխանութեան բաժանման խնդիրը Սահմանադրութեան մէջ կանխատեսուած չէ , բնաւ պետական հարուածոյն առաջը չառնուիր : Ասոնք այն տեսակ օրէնքներ են որք Հայունը տարբեր , Գաղղիացունքն եւ Անգղիացունքն տարբեր չեն կրնար ըլլալ . արդի դրութիւնն ոչ միայն մեր նախնեաց անձանց թէ , այլ եւ հին Հռոմայեացուց եւ Յունաց մէջ անգամ չգիտէին եւ նոյն իսկ հին հասարակապետութիւններն այդ երկու իշխանութիւնն ալ իրենց ձեռքն ունէին , եւ թէեւ շատ ատեն զանազան անձանց կամ մասնաժողովոց կյանքնէին , բայց դարձեալ միահեծան իշխանութեան պէս բան մ'էին , ըստ որում Իմպերէլունէին , որով ժողովուրդը դարձեալ կամ մէկ մարդու կամ 2 հազար մարդոց իշխանութեան տակ մնալով բռնութենէ ազատ չէր համարուէր : Ուստի այս իշխանութեան բաժանման սկզբունքն եկաւ ժողովրդոց ապահովութիւնը հաստատեց : Պէտք է որ օրէնսդիր եւ գործադիր իշխանութիւնք իրարմէ անկախ ըլլան եւ իրարու չմիջամտեն . բայց մեր Սահմանադրութեան գալով կը տեսնեմք որ վարչական իշխանութիւնն իստորովին այս սկզբունքն հակառակն է . մեր Սահմանադրութիւնը կըսէ թէ Պատրիարքն է գործադիր իշխանութեան գլուխը . բայց մի է Պատրիարքը , ինչ է իւր պաշտօնը . իբրեւ գործադիր իշխանութեան գլուխ՝ ձեռքն արտօնութիւն մը չկայ :

ՍՈՒՐԷՆԵԱՆ Յ. ԷՖ.— (Ընդհանրէլ) Այդ խօսքերդ խնդրէն դուրս են . մանրամասնութեանց մէջ մի մտնէք , ձեր կարծիքը համառօտ կերպով եզրակացուցէք :

ԱՏԵՆԱՊԵՏ ՓԱՇԱ.— Կաղաչեմ , մի ընդմիջէք . ատենաբան էֆէնտինն ալ կաղաչեմ որ շատ իմաստասիրութեանց մէջ չմտնէ :

ԵՆՍՈՒՅԵԱՆ Ս. ԷՖ.— Եթէ ժողովը կը կարծէ թէ վերաքննութեան ընդհանուր սկզբունք մը վրայ խօսելու սահմանէն խտտորեցայ , պատրաստ եմ լուի :

ՍՈՒՐԷՆԵԱՆ Յ. ԷՖ. Խօսք կուզեմ :

ԱՏԵՆԱՊԵՏ ՓԱՇԱ.— Ներեցէք , կաղաչեմ , Սուրէնեան էֆէնտին , թոյլ տուէք որ շարունակէ ատենաբան էֆէնտին վերաքննութեան վերաբերեալ կէտերուն վրայ իւր կարծիքն ամբողջութեամբ համար՝ առանց նախաքննիչ դիւանէն եկած երկու տեղեկագրոց շրջանէն խտտորելու :

ԵՆՍՈՒՅԵԱՆ Ս. ԷՖ.— Վերաքննութեան վերաբերեալ կէտ կը համարիմ Պատրիարքին եւ ազգային ժողովոց իշխանութեան ճիւղերը . եթէ նախաքննիչ դիւանին տեղեկագրէն դուրս է այս խնդիրը , ինչ ընեմ , չը պիտի խօսիմ . ես կխոսնարիմ ժողովին կամացը , եւ ասոր համար քիչ մը առաջ ըսի թէ , եթէ չեղեցայ խնդրէն , կը լուեմ :

ԱՏԵՆԱՊԵՏ ՓԱՇԱ.— Վերաքննիչ յանձնաժողովոյ ծրագիրը ժողովն յանձնել է նախաքննութեան դիւանին , ուսկէց տեղեկագիր մը եկած է , այն բաւական չէ եղեր՝ ուրիշ տեղեկագիր մ'ալ բերեր է , եւ այս երկու տեղեկագրոց վրայ բացուեր է վիճարանութիւնը . ըսել է որ նոյն երկու տեղեկագրոց ընդհանուր ոգւոյն վրայ պիտի խօսուի , եւ անկէ դուրս ինչ որ ալ խօսուի , թէեւ սքանչելի խօսքեր , կարգէ դուրս են , անոր համար պէտք չէ որ խնդրոյն ուղղութեանէն խտտորիմք :

ԵՆՍՈՒՅԵԱՆ Ս. ԷՖ.— Կարծեմ որ մինչեւ հիմա խօսածներս վերաքննութեան ընդհանուր սկզբունք վրայ են . ամենեւին դիտաւորութեանս մէջ նոր առաջարկութիւն մը բերել չկայ , եթէ կայ , ետ կառնեմ . երբ ընդհանուր սկզբունք վրայ կարծիքս յայտնելու ելայ , կարեւոր կէտ մը եկաւ միաքս , զոր յաւելցնել ուզեցի . բայց ցաւօք տեսայ որ պաշտօնակիցներէս մէկն ընդմիջեց խօսքս՝ անշուշտ կարծելով թէ իւրն դէմ կխօսիմ . ընդհակառակն որեւէ անձի դէմ նկատուած մը անցած չէ մօքէս , ես նոր առաջարկութիւն մը չբերի , ոչ ալ վիճարանութեան կարգէն խտտորելու նպատակ ունէի . բայց քանի որ դիւանը կըսէ թէ կարգէն դուրս է , խօսքս կզաղորեցնեմ եւ չեմ ուզեր շարունակել :

ԱՏԵՆԱՊԵՏ ՓԱՇԱ.— Վիճարանութիւնը տակաւին պիտի շարունակի . խօսք ուղած են Քրիստոստուր եւ Սուրէնեան էֆէնտինները . բայց խօսք տալէ յառաջ կը ծանուցանեմ որ եթէ այսպէս երթանք՝ չենք կրնար խնդրոյն լուծմանը հասնիլ . կանոն եղած է որ նախ խնդրոյն ընդհանուրութեան վրայ վիճարանութիւն ըլլայ . կանոնադրութիւնը դուք հաստատել էք , երբ ես պատիւ չունէի ձեր մէջը գտնուելու . ձեր դրած կանոնին հետեւելով պարտաւոր եմ նախաքննիչ դիւանէն եկած տեղեկագրոց ընդհանուր ոգւոյն վրայ խօսել տալ ձեզ . վասն զի վիճարանութեան կարգն այսպէս կպահանջէ :

Ինքնիշխան Կ. Էֆ. — Բայց եթէ տեղեկագրերը թերի են եւ ընդհանուր սկզբանց ամեն կէտերը չեն պարունակէր, միթէ իրաւունք չի պիտի ունենանք անոնցմէ դուրս խօսելու :

ԿՐՃԻԿԵԱՆ Յ. Էֆ. — Օրակարգին մէջ «չարունակութիւն վիճարանութեան՝ ընդհանուր սկզբանց վրայ» գրուած է . ուրեմն ինչո՞ւ չը կրնամք ընդհանուր սկզբանց վերաբերեալ ամեն նիւթերու վրայ խօսիլ :

(Շշուշէր)

ԱՏԵՆԱՊԵՏ ՓԱՇԱ. — Խօսքը Սուրէնեան է-ֆէնտինն է :

ՍՈՒՍԻՆԵԱՆ Յ. Էֆ. — Եռուստֆեան էֆէնտինի դէմ խօսեցայ . պատճառն ուրիշ բան չէր, բայց եթէ պատմական տեսութիւն ընելու առթիւ Սահմանադրութեան հիմնական կէտերու քննութեան մտնալն . ըսաւ թէ ամեն ազգաց մէջ ինչպէս կար է ամեն տարի սահմանադրութիւնը վերաքննելն : Ասոր դէմ կըսեմ թէ արդէն վերաքննութիւնն Յ տարի պայմանաժամ ունի . եթէ այս պայմանաժամը մինչեւ 8 կամ 9 տարի երկարեցաւ, զոհողութիւն մ'էր այդ . այս ուրիշ խնդիր է . Եռուստֆեան էֆէնտին պէտք էր ցոյց տալ Սահմանադրութեան մէջ մի կէտերն են ինչպէս կարճ զոր փոխել հարկ է, եւ ոչ թէ իւր վիճարանութեան նիւթ ընտրել այնպիսի հիմնական կէտերն՝ որոնք անփոփոխելի են եւ որոց դպրի չըլլար, ինչպէս է Պատրիարքական իշխանութիւնը, եւայլն :

ԱՏԵՆԱՊԵՏ ՓԱՇԱ. — Կերեւի որ Սուրէնեան էֆէնտինն սխալ հասկըցած է Եռուստֆեան էֆէնտինի խօսքերը, եւ կարծեր է թէ Պատրիարքական իշխանութեան սահմանը կքննադատէ . մեք այնպէս չ'հասկըցանք :

ԵՆՈՒՍՈՒՑԵԱՆ Տ. Էֆ. — Եթէ երեսփոխան էֆէնտիններուն ամենն ալ Ատենապետ փաշային հասկըցածին պէս հասկըցած են իմ խօսքերս, որուն տարակոյս չունիմ, նոր բացատրութիւններ տալու հարկ չեմ տեսներ :

ԱՏԵՆԱՊԵՏ ՓԱՇԱ. — Խօսքը Քրիստոստուր էֆէնտինն է :

ՂԱԶԱՐՈՍԵԱՆ Ք. Էֆ. — Տեղեկագրոց ընդհանրութեան վրայ եղած վիճարանութիւնք բաւական համարելով կառավարկեմ որ յօդուածոց վիճարանութեան անցնինք . երբ մանրամասնութեանց մէջ մտնենք, այն ատեն ալ բաւական խօսելիքներ կրնանք ունենալ : Այս է իմ առաջարկութիւնս :

ԱՏԵՆԱՊԵՏ ՓԱՇԱ. — Խօսից կարգը Ռուսինեան էֆէնտինն է . անոր ետեւէն կրճիկեան էֆէնտին խօսք ուզած է . այս երկու էֆէնտիններն ալ խօսելէ ետեւ, եթէ ժողովն ուզէ՝ ընդհանրութեան մասին վիճարանութիւնը կըրնանք գոցել եւ մասնաւոր յօդուածոց անցնիլ : Ուրեմն խօսքը Ռուսինեան էֆէնտինն է :

ՌՈՒՍԻՆԵԱՆ Էֆ. — Այսօր խօսք չունիմ, իմ կարգս յաջորդ նստին կվերապահեմ :

ԱՏԵՆԱՊԵՏ ՓԱՇԱ. — Ըսել է, ձեր խօսքին կարգը կրճիկեան էֆէնտինն կուտաք . ուրեմն խօսքը կրճիկեան էֆէնտինն է :

ԿՐՃԻԿԵԱՆ Յ. Էֆ. — Կարճ դիտողութիւն մըն է ընելիքս : Եռուստֆեան էֆէնտինն ընդհանուր սկզբանց վրայ սկսած ատենաքանութիւնը դեռ չ'մնցուցած ընդմիջուեցաւ իբր թէ Օրակարգէն դուրս կխօսի . ուստի եւ հրաժարեցաւ իւր ատենախօսութենէն . կարծեմ թէ երեսփոխան մը քանի որ խնդրոյն չըջանակէն դուրս չելնէր, որքան ուզէ՝ կրնայ խօսիլ . Եռուստֆեան էֆէնտինն ալ խնդրոյն չըջանակին մէջ ըլլալով կցաւ իմ որ ընդմիջուեցաւ եւ խօսելէ դադրեցաւ . ուստի կինդրեմ որ իւր ատենաքանութեան թելը ձեռք առնելով վերըստին շարունակէ, վասն զի այսօրուան վիճարանութիւնը սահմանադրական վերաքննութեան խնդրոյն ընդհանրութեան վրայ է, ինչպէս անցեալ նիստի ատենադրութեան մէջ նշանակուած կտեսնենք :

ԱՏԵՆԱՊԵՏ ՓԱՇԱ. — Կրճիկեան էֆէնտինի դիտողութիւնն իրաւացի կրնայ ըլլալ ուրիշ առթիւ, բայց այս պարագային մէջ ոչ . կերեւնայ թէ ինք անցեալ նստին ատենադրութեան վերջին տողը միայն կարդացեր է, եւ անկէ առաջ եղած խօսքերը իբր թէ չեղածի պէս ըմբռներ է : Ասկէց զատ ցաւալի է որ Եռուստֆեան էֆէնտինն փաստաբան կկանգնի, մինչդեռ նա ընաւ ուրիշին պաշտպանութեանը կարօտ մէկը չէ, եւ կարօտութիւն չ'ունենալը ինքն իսկ յայտնելով պահ մը առաջ մերժեց ուրիշներուն առաջարկութիւնը : Մնաց որ եթէ կրճիկեան էֆէնտինն կկարծէ թէ ընդհանուր սկզբանց պատրուակին տակ ամեն բան կրնայ խօսուիլ, շատ կսխալի . մեք երկար ճառեր մտիկ ընելու պէտք չունինք . վերաքննութեան խնդիրն արդէն քանի մը անգամ մեքենայէ անցած եւ հասած է մինչեւ այս կէտին . Եռուստֆեան էֆէնտինն ինք ըսաւ թէ կըսեմ :

քանի որ խնդրոյն չըջանէն դուրս չպիտի խօսուի : Ուրեմն նա կարօտութիւն չունի իւր ատենախօսութիւնը շարունակելու :

Իսկ Ռուսինեան էֆէնտինն չուզէր այսօր խօսիլ . ժողովին կհարցնեմ թէ ինչ պիտի ընենք . դադրեցնենք վիճարանութիւնը՝ թէ շարունակենք :

ՂԱԶԱՐՈՍԵԱՆ Ք. Էֆ. — Իմ առաջարկութիւնս կկրկնեմ . այն է ընդհանրութեան վրայ վիճարանութիւնը գոցել եւ յօդուածոց վիճարանութեան մէջ խօսիլ ինչ որ պիտի խօսինք :

ՓԱՓԱՋԵԱՆ Ս. Էֆ. — Կձայնակցիմ Քրիստոստուր էֆէնտինն :

ԱՏԵՆԱՊԵՏ ՓԱՇԱ. — Ուրեմն այս կէտին վրայ քիչ մը կրնանք խօսիլ . որովհետեւ Ռուսինեան էֆէնտինն յաջորդ նստին համար խօսք ուզած է . եթէ ժողովը կուզէ որ զայն ալ մըտիկ ընէ, հարկ կըլլայ նիստ մը զոհել :

ՂԱՅՆԵՐ. — Ռուսինեան էֆէնտինն կկրնի դրենք որ այսօր խօսելու չնորհ ընէ նիստ մը չզոհելու համար :

ՌՈՒՍԻՆԵԱՆ Էֆ. — Շատ լաւ . եթէ պահ մը հանգիստ տրուի, կխօսիմ :

Այս միջոցին քառորդ մը դադար առաւ ժողովն, եւ ժամն 9 ին նորէն ատենաքանութիւնը շարունակեց :

ԱՏԵՆԱՊԵՏ ՓԱՇԱ. — Խօսքը Ռուսինեան էֆէնտինն է :

ՌՈՒՍԻՆԵԱՆ Էֆ. — Երկար չը պիտի խօսիմ, այլ շատ կարճ . իմ բերած տեղեկագրիս մէջ ըսածներուս վրայ նոր բան մը չը պիտի յաւելցնեմ . մանաւանդ թէ շնորհակալութիւն պիտի յայտնեմ դէմ խօսող երեսփոխան էֆէնտիններուն, որ դէմ խօսելով աւելի եւս հաստատեցին տեղեկագրիս մէջ նշանակուած կէտերն ու առաջարկութիւնները : Բայց անոնց չանցած ընդհանուր վիճարանութիւն բառին վրայ պիտի խօսիմ, որովհետեւ շատերը շիթեցան այս բառին վրայ . ոմանք Սահմանադրութեան ընդհանուր սկզբանց վրայ մեծ քննութիւն բանալ եւ վարդապետութիւններ ընել ուղեցին . բայց խնդիրն այդ չէր . խնդիրը Վերաքննիչ յանձնաժողովոյ բերած ծրագրին եւ ասոր վրայօք Նախաձեռնութեան ղիւանէն եկած տեղեկագրին վրայ էր . ասոնք մէկ կէտի մը նկատմամբ միացած էին, այն է թէ Սահմանադրութեան մէջ խել մը աւելորդ յօդ-

ուածներ կան . բայց ոչ Վերաքննիչ յանձնաժողովն եւ ոչ Նախաձեռնութեան ղիւանն այդ աւելորդ յօդուածոց խուզարկութեանը մտած էր, այլ առ այժմ այդ խնդրոյն միջամուխ չըլլալով ձգած էր ժամանակին . բայց ինչ ըրաւ . միայն ընդհանուր քննութիւն մը ըրաւ . մեք ինչպէս հասկըցանք այդ ընդհանուր քննութիւնը . Վերաքննիչ յանձնաժողովոյ ծրագրին մակագիրը բաւական է հասկըցնել . այս մակագիրն է քննիչէն որ մտաւ Սահմանադրութիւնն : Ասոր վրայ մեզ ուրիշ բան չէր մնար ընել, այլ նկատել թէ փոփոխելի տրամադրութիւնք միայն անոնք էին՝ զորս Վերաքննիչ յանձնաժողովն իւր ծրագրով ներկայացուցած էր, թէ անոնցմէ դուրս ուրիշ կէտեր ալ կան : Մեք նայեցանք որ ուրիշներ ալ կան . ինչպէս որ յանձնաժողովն ալ ըսած էր թէ կան, բայց անկարեւոր համարած էր . մեք քննեցինք եւ տեսանք որ աւելի կարեւոր կէտեր ալ կան վերաքննութեան արժանի, որոնք խոյս տուած են յանձնաժողովին ուշադրութենէն . ուստի ընդհանուր վիճարանութեան մէջ ամեն երեսփոխան իրաւունք ունի այս կերպիւ քննելով այս կամ այն կէտն իբր վերաքննելի յաւելցնել կամ ընդհակառակն վերաքննելի կէտերը պակասեցնել հարկաւ պատճառաբանութեամբ : Այդ յաւելնալիք կէտերն իբրեւ փոփոխելի ընդունուելէն ետեւ, անոնց վրայ մանրամասնութեանց մէջ վիճարանութիւն կըլլայ . այս կերպով մեք ալ յանձնաժողովին բերած կէտերուն վրայ մեր կողմէն վերաքննութեան կարօտ քանի մը կարեւորագոյն կէտեր յաւելցուցինք եւ առաջարկեցինք որ անոնք ալ փոփոխելի կէտերուն կարգը դասուին : Տակաւին վերջնական որոշում մը եղած չէ . դեռ երկու վիճարանութենէ եւ երկու որոշումէ պիտի անցնին : Քանի մը երեսփոխանք շօշափեցին այս կէտերը, ուղեցին ուրիշ կէտ ալ յաւելցնել, բայց խօսեցան ու անցան՝ առանց առաջարկութիւն մ'ընելու : Ուստի կը մնան Վերաքննիչ յանձնաժողովին եւ Նախաձեռնութեան ղիւանին ցուցած կէտերը միայն : Իս ինչպէս պահ մ'առաջ մեր ստաջարկութեանց դէմ խօսողներուն համար շնորհակալութիւն յայտնելով ըսի թէ դէմ խօսելով մեր կարծիքները հաստատած են, հիմա զայդ պիտի ապացուցանեմ, թէ որ կներուի, հոս փակագծի մէջ բան մ'ալ ըսեմ : Տ. Մատթէոս վարդապետ Վերաքննիչ յանձնաժո-

դո՞վոյ տեղեկարբերութիւնը կկատարէ, մինչդեռ բուն տեղեկարբեր Այվատեան էֆէնտին փոխանակ իւր Օգսէն էֆէնտին տեղեկարբեր ցուցած էր . . .

ՓԱՓԱՋԵԱՆ Ս. ԷՖ. — Օգսէն էֆէնտին բացակայութեան ատեն Տ. Մատթէոս վարդապետ տեղեկարբեր նշանակուած է :

ՌՈՒՍԻՆԵԱՆ ԷՖ. — Նախորդ նստին Օգսէն էֆէնտին ալ նեղկայ էր, դարձեալ Տ. Մատթէոս վարդապետ խօսեցաւ իբրեւ տեղեկարբեր : Ինչ որ է, ձգենք դայտ : Տեղեկարբեր հայր սուրբը մեզի հետ համաձայն է . մեր առաջարկութեանց նկատմամբ խել մը խօսքեր ընելէ ետեւ վերջապէս սա պատասխանը կուտայ թէ թաղային ժողովոց հաստատութիւնն ամեն թաղերու չյարմարիր . ըսել է թէ սկզբունքը կընդունի . իսկ ամեն թաղերու կյարմարի թէ ոչ, այդ խնդրոյն երկրորդական մասն է, որ երկրորդ ընթերցանութեան ատեն կմնայ որոշել : Տեղեկարբեր հայր սուրբէն ետեւ Փափագեան էֆէնտի խօսեցաւ մեր առաջարկութեանց դէմ, եւ ըսաւ թէ թաղային ժողովոց հաստատութեան մասն իբրեւ փորձառութեան արդիւնք չէ ներկայացուած, այլ իբրեւ պակաս կամ զանց առնուած կէտ մը : Ուստի կմնայ ինձ ապացուցանել թէ փորձառութեան արդիւնք է . եւ երբ ասիկայ ապացուցանեմ, ըսել է թէ նա ալ պիտի համաձայնի եւ ընդունի : Փորձն երկու տ'սակ է . դրական եւ բացասական : 15 տարիէն ի վեր Ազգն իւր Սահմանադրութեան համեմատ թաղական խորհուրդ անունով մատակարարութիւններ ունեցած է թաղերուն մէջ . կհարցնեմ թէ մինչեւ հիմա ինչ օգուտ տեսած են թաղերը, եկեղեցիներն ու դպրոցները . — ոչինչ . որովհետեւ Սահմանադրութիւնը թաղերուն մէջ չէ մտած, 15 տարուան փորձը կցուցնէ որ այս ճամբան փոխել պէտք է եւ ուրիշ թաղային մարմին մը սահմանադրել : Ան ալ է բացասական փորձառութեան մը արդիւնքը . — Փափագեան էֆէնտին կրսէ . « Այս զանցառութիւնը կամ պակասը քայտնի ցուցնելու համար Ռ. երեք կարգ մաւ քաղաքարութեան կրամնէ ազգային իշխաւ քաղաքարութիւնը, եւ մինչեւ ցարդ գիտցուածին քաղաքարութեան կեդրոնական եւ գաւառական քաղաքարութիւններն ալ թաղային մատակարարութեանց կարգը կիջնցնէ » : Ընդհակառակն եւ թաղերը կբարձրացնեմ, անոնց թաղային

ժողով տալով . վասն զի ինծի եւ շատերուն համար թաղային մատակարարութիւնն է ազբիւր ամեն իշխանութեան եւ օրրան ազգային դաստիարակութեան . կբարձրացնեմ թաղերը՝ ժողով անունը տալով, որպէս զի Սահմանադրութեան օգուտները թաղերն ալ վայելեն : — Կրսէ որ « Կեդրոնին մէջ Պատրիարք քը եւ գաւառաց մէջ Առաջնորդները կայսեւ քաղական հրովարտակներով հաստատեալ իշխաւ քաղաքարութիւններ ըլլալով՝ Սահմանադրութիւնը քաղաքարութիւնը կարչութիւն կանուանէ, իսկ քաղաքարութիւնը « կարարութիւն » : Աղէկ մը չեմ հասկընար թէ այս խօսքերով ինչ ըսել կուզէ . կարծեմ ըսել կուզէ թէ թաղերուն մէջ իշխանութիւն չկայ, վասն զի հրովարտակ չկայ, Իշխանութիւնը հրովարտակի վրայ չէ . հրովարտակը մէկ անգամ տրուած է . քանի որ թաղական խորհուրդ կայ, իշխանութիւն մը կայ ըսել է . ուր որ իշխանութիւն կայ, հոն գործ կայ, այդ իշխանութիւնը ձեռք մ'է որ կգործէ . միայն դըլուխը պակաս է, պէտք է դըլուխ մը տալ անոր : « Մեր թաղային մատակարարութիւններն ընտանեկան են » կրսէ . մեք չենք ուզեր որ ընտանեկան ըլլան, այլ թաղային, որով եւ ազգային ըլլան : Քիչ մը վարը կրսէ նաեւ թէ « ինչպէս գերդաստանի մը մէջ անոնք որ ծաւալուց կմասնակցին, իբրեւ ունին ձայն քաղաքարութեան նոյն գերդաստանին գործոց մէջ, քաղաքարութեան համար մէկը կընտրեն . « ասանկ ալ Վերաքննիչ յանձնաժողովոյ առաջարկութեանը համաձայն թաղերուն մէջ քաղաքարութեան ձայն պիտի ունենան » որ թաղին պիտի տայից ծախուող կմասնակցին ուղղակի տրուի քաղաքարութեան մասնակարար խորհուրդը պիտի ընտրեն » : ձիւղ մեր ըսածն ալ այդ է . այն թաղեցիք՝ որ պարտքերնին կվճարեն, ձայն ունին ազգային գործոց մէջ . ան ալ ձայնն է որ մեք կը փնտռենք՝ թաղային ժողովոյ բերնով : Ասով ալ դարձեալ մեր առաջարկութիւնը կը հաստատուի : « Թաղերուն մէջ տուրք տուողները միայն ձայն ունենալով գործն ամբողջին չմնար » կրսէ : Ի՞նչ կը հասկնայ ամբողջ ըսելով . մեք բազմութիւն կը հասկնանք . եթէ թաղի մը մէջ 500 հոգի կայ տուրք տուող, կրնայ ըլլալ որ ամենը մէկէն ձայն ունենան . մեք կուզենք որ ասոնք իրենց ներկայացուցիչ ժողով մը կազմեն եւ անոր բերնովը խօսին : « Ո՞ւր դնենք,

« կրսէ, թաղային ժողով հրաւիրելու կառաւարելու եւ անոր որոշումները գործադրելու « իշխանութիւն մը չգտնուիր . . . թաղային « ժողովի նախագահութիւնն մի պիտի վայէ, քաղաքարութեան ինչպէս պիտի « գործադրէ թաղային ժողովոյ որոշումները » : Զարմանալի բան . մինչեւ հիմա թաղին մէջ ժողով մը պէտք կըլլար գումարել, մի կըլլաւ մարէր . կարծեմ թաղին առաջնորդն, այսինքն՝ քարոզիչը կամ աւագերէցն է որ կհրաւիրէ թաղային ժողովը . ինչպէս որ իբրեւ նախագահ կստորագրէ ընտրողական ժողովոյ հրաւերներն ու տեղեկագիրը :

« Թաղային ժողովոց մասին կարծիքս համարուած ըսելով Փափագեան էֆէնտին կը շարունակէ . ամեն խորհող անձանց յայտնի « կերելի թէ փոքրաթիւ բնակիչ ունեցող դիւր « զօրէից եւ նոյն իսկ առաջնորդանիստ քաղաքացի մէջ անգործադրելի է թաղային ժողովոյ գրութիւնը . ինչ օրէնք որ ամենուն չը « վերաբերիր, այն՝ Սահմանադրութեան մէջ « տեղ չունի եւ չկրնար ունենալ » :

Ըսել է թէ փոքրաթիւ բնակիչ ունեցող գիւղեր կամ քաղաքներ կան եղեր, որոց մէջ մեր առաջարկած դրութիւնը չկրնար գործադրուիլ . բայց ես կըսեմ . թող դան ինծի հետ եւ ցուցնեմ թէ օրքան բազմաթիւ բնակիչ ունեցող գիւղեր կան, որ թաղական խորհուրդ ունին եւ կգործեն, իսկ թաղային ժողով չունին . այս մեծաթիւ բնակչօք գիւղերն հրկաւաւ աւելի են 8 կամ 10 տուրք գիւղերէն, որոց մէջ թաղական խորհուրդ գտնուելու ալ հարկ չկայ . համարենք թէ ագորակ մը ունինք, յորում 5—4 տուն եւ եկեղեցի մը կայ . միթէ հարկ է որ անպատճառ թաղական խորհուրդ ունենայ, քանի որ այն եկեղեցին քահանայ մը ունի, բաւական է, նա ամեն բան կկատարէ . ասկէ չհետեւիր թէ ուր որ թաղական խորհուրդ կայ, հոն թաղային ժողով չըլլար : « Գարձեալ, կրսէ, օրէնքը վերաքննելու եւ « փոխելու ատեննիս աւելի եւս զգուշաւոր « պէտք է ըլլանք, որպէս զի ժողովրդեան ընտանեկան մը չխանգարուի եւ նորէն այբուբենի « չսկսի . բայց կուզեմ թէ պէտք է որ մեք « պահպանողական յառաջադիմութիւն ունեւ « նանք . . . » : Պահպանողական խորհուրդ կը զեղեցիկ է, բայց յառաջադիմութեան հետ չերթար . ով որ պահպանողական է, պէտք է

կանգ առնու, իսկ յառաջադիմութիւնը չկրնար կանգ առնուլ :

ՓԱՓԱՋԵԱՆ Ս. ԷՖ. — Տաճկաստանի հպատակ ժողովրդեան մը օրէնսդրութեան մասին միայն :

ՌՈՒՍԻՆԵԱՆ ԷՖ. — Վերջապէս կը համարիմ Փափագեան էֆէնտինի դիտողութեանց սա կըրտարին, ուր կրսէ . « Այս պատճառաւ ես արքա « ծան կգտնեմ փոխանակ Սահմանադրութեան « մէջ նկատողութեան անելու, թաղային կա « նոնադրութեան մէջ նկատողութեան անուլ « այս խնդիրը, կանոնադրելով թէ ժողովս « արժան դատէ, որ Վարչութիւնը հարկ եղած « ատեն ընտրողները հրաւիրէ եւ անոնց կար « ծիքն առնու թաղային խորհոյ մը վրայ . կամ « եթէ բազմաթիւ են ընտրողք, ասոնցմէ ընտ « րեալ ծերակոյտ մը կամ պատգամաւորութիւն « մը կամ թաղային ժողով մը յատկացնէ, ինչ « անունով որ կուզուի, որով ըստ այնմ փոր « ձառութիւն կուեննայ ապագային մէջ » : Ըսել է թէ ինք ալ հարկ կհամարի նկատողութեան անուլ այս խնդիրը եւ Վարչութեան կյանքնէ հրաւիրել թաղին ընտրողները եւ անոնց կարծիքը հարցնել . ան ա հոս կուզէի տեսնել զինքը . կերելի թէ փրկութեան ճիւղ մը կփնտռէ նախ թէ ինչպէս անունով, յետոյ պատճառաւ անունով . եւ վերջապէս կուզայ կփակչի փրկութեան ճիւղին՝ որ է ինչպէս ժողովը . . .

ՓԱՓԱՋԵԱՆ Ս. ԷՖ. — Ուրեմն տարբերեցաւ . երկրորդ ընթերցման կպահեմ իմ պատասխաններս :

ՋԱՅՆԵՐ. — Մանրամասնութեան մի մտնէք : ՌՈՒՍԻՆԵԱՆ ԷՖ. — (Երանալիք) Վերջապէս՝ երեսփոխանաց բաշխման եւ ընտրութեան եղանակի խնդրոյն գալով, կրսէ թէ Պօլիս փոխանակ 5 շրջանակի բաժնելու, ժողովը թէ որ կուզէ մէկ շրջանակի թող վերածէ : Ուստի այս շրջանակի խնդրոյն մէջ ալ մեզի հետ համախա է :

Կէս մը մնաց՝ որուն վրայ ալ պէտք է խօսիմ : Ընտրութեանց պատուանդանին վրայ խօսելով կրսէ . « Սահմանադրութիւնն ընտրութեան ժողովի վրայ այդ պատուանդանը գրած « է արդէն, եւ 12 տարի առաջ, նոյն իսկ Ա « տեսնապետ փաշային ձեռքը՝ որ Սահմանա « գրութեան առաջին գործադր յանձնաժողովին « ատենապետն էր, 5000 ի մօտ ընտրողաց վը-

Երայ բաշխուեցան 80 երեսփոխանք , եւ կլի-
 աշեմ թէ 45 ընտրողի 1 երեսփոխան վիճակե-
 ալով , թաղ մը քանի 45 ընտրող ունէր , այն-
 աչափ երեսփոխան տալ վիճակեցաւ անոր , եւ
 ընդհակառակն 45 էն նուազ ընտրող ունե-
 ցողներն ալ միացան . որինակի համար 25
 ընտրող ունեցողին հետ 15 կամ 18 ունեցողը
 զմիանալով մէկ երեսփոխան տուաւ 2 : ձիշդ
 մեր ուղածն ալ այդ է . փոխանակ 45 ի վրայ
 բաժնելու , բոլոր Պօլիս 5 կամ 1 շրջանակի
 վերածելով քուէարկութիւնն ընելու է . այն
 ատեն՝ եթէ ընդ ամենը 4 հազար ընտրող կայ ,
 2 հազար քուէով կուգայ երեսփոխան մը եւ
 չէ թէ 45 քուէով :

Արդ , ինչպէս կտեսնուի , բոլոր այս ըս-
 ուածներէն , մեր ըրած առաջարկութիւնները
 փոխանակ հերքուելու կհաստատուին նոյն իսկ
 դէմ խօսողաց բերնով : Ուստի եղբարկացնելով
 կըսեմ թէ ժողովը մինչեւ ցարդ վիճաբանու-
 թենէն բաւական լուսաբանուած ըլլալով ,
 հարկ է այսօր ընդհանրութեան վրայ վիճաբա-
 նութիւնը դոցել եւ յօդուածոց քննութեանը
 մտնել նախաձեռնութեան դիւանի տեղեկա-
 գրէն սկսելով : Ալ ուրիշ ըսելիք չունիմ եւ
 կառաջարկեմ որ քուէարկութիւն ըլլայ :

ՉԱՅՆԵՐ .— Կրկինեք քուէարկութեան ա-
 աջարկութիւնը :

Ատենապետ փաշան քուէի դրաւ նախ
 տեղեկագրոց բովանդակութեան վրայ ընդհա-
 նուր վիճաբանութիւնը դոցելու առաջարկու-
 թիւնը , որ միաձայնութեամբ ԸՆԴՈՒՆՈՒԵՑԱԻ
 ժողովէն :

Յետոյ քուէի դրաւ երկրորդ ընթերցման
 եւ յօդուածոց քննութեան անցնելու առաջար-
 կութիւնը , որ նոյնպէս միաձայնութեամբ ԸՆ-
 ԴՈՒՆՈՒԵՑԱԻ ժողովէն :

ԱՏԵՆԱՊԵՏ ՓԱՇԱ .— Հիմա ժողովին որոշ-
 մամբ տեղեկագրոց բովանդակութեան մասին
 ընդհանուր վիճաբանութիւնը դոցուած է , եւ
 երկրորդ ընթերցմամբ յօդուածոց մանրամասն
 վիճաբանութեանը պիտի անցնինք : Բայց ինչ
 էր առաջին ընթերցումն եւ ինչ պիտի ըլլայ
 երկրորդին . ասիկա քիչ մը բացատրել պէտք
 կը տեսնեմ որպէս զի գիտնանք թէ ինչ ըրինք
 եւ ինչ պիտի ընենք : Ինչորոյն վրայ ընդհանուր
 կերպով վիճաբանութեան ժամանակ , նախ

կէտ մը կար քննութեան արժանի . այսինքն
 թէ Սահմանադրութիւնը գլխովին պէտք է վե-
 րաքննել , եթէ՛ մասնակի , եւ կամ աւելի բա-
 ցայայտ խօսելով , զանի բոլոր մասնաւոր կա-
 նոններէն եւ հրահանգական տրամադրութիւն-
 ներէն զտելով , ամիսփի եւ պարզ նոր սահմա-
 նադրութիւն մը խմբագրել պէտք է , թէ , ա-
 սոր հակառակ , անոր կազմութեանը՝ ինչպէս
 որ է , չդպչելով , միայն փորձառութեամբ
 դժուարագործադրելի կամ անկարելի դատուած
 տրամադրութիւնները փոխել եւ անով այս ան-
 գամ շատանալ . այս՝ վիճաբանութեան առար-
 կայ եղաւ . եւ թէ պէտքերկու կարծիքն ալ պաշտ-
 պանողներ ունեցան , սակայն ամենուն սրտին
 մէջ սա վերաքննութեան մեծ գործը վաղ ընդ
 փոյթ կատարել եւ ազգին օրէնքը սրբազրու-
 թեամբ վաւերացեալ կրկին ձեռքը յանձնելու
 փափաք մը եւ նախանձ մը տիրելը քաջ նըշ-
 մարեցի . ուստի այս մասին խոհեմութեամբ
 վարուելնուս վրայ կասկած չունիմ :

Երկրորդ՝ Յանձնաժողովոյ ծրագիրն ու
 Ն. դիւանի տեղեկագիրն մեզ մէկ քանի փո-
 փոխութիւններ առաջարկած էին . ասոնց մէջ
 կային կետեր որ սկզբանց վը վերաբերէին .
 ինչպէս Կեդրոնական Վարչութեան ժողովոց
 թիւն երեքի վերածելու առաջարկութիւնը ,
 որ քաղաքագիտական սկզբան մը պատշաճու-
 թիւն ունի : Դուք քաջ գիտէք որ կայսերա-
 կան կառավարութիւնը հպատակ ոչ-Մահմե-
 տական ազգաց շնորհած վարչական արտօնու-
 թիւնները մէկ սկզբան հետեւելով եւ հնար ե-
 դածին չափ միօրինակ ձեւով տնօրինած է . եւ
 ըստ որում մեր Կրօնական եւ Քաղաքական ժո-
 ղովները Տէրութեան հրովարտակաւ կհաստատու-
 ուին ուրիշ ազգաց ժողովներուն նման , չգիտեմ
 թէ ասոնց հաւասար երրորդ եւ նոր ժողով
 մ'ալ աւելցուելը Տէրութեան ընդունած ըս-
 կըզբան եւ ընթացքին համաձայն կերթայ մի :

Ուշադրութեան արժանի կէտ մ'ալ Թա-
 դական եւ Երեսփոխանական ընտրողութեան
 պայմաններուն մէջն է , զոր վերաքննիչ խումբ
 եւ նախաքննիչ դիւան Սահմանադրութեան
 տրամադրածէն տարբեր տնօրինած են եւ մեզ
 կառաջարկեն ասոր մէջ ազատամտութեան եւ
 ժողովրդական ազատ քուէարկութեան միան-
 գամայն քաղաքագիտութեան վերաբերեալ
 սկզբունք կան որ նկատողութեան արժան են :

Նոյնպէս , կատարեալ ուշադրութեան ար-
 ժան է եւ խորին քննութեան կարօտ այն կէտը
 որով թաղային վարչութեան մէջ նոր ժողով մը
 մտցունել կառաջարկուի իբր ընտրող եւ հսկող
 թաղական մատակարարութեան . ես պիտի ը-
 սեմ պարզապէս տնօրէն սոյն մատակարարու-
 թեան . այս տեղ ապակեղորոնացման սկիզբ մը
 կտեսնեմ որ ինքզինք ցոյց կուտայ եւ կարծէ
 որ որոշելէն առաջ լաւ զուգակշռենք անոր
 բարիքն ու չարիքը :

Գարձեալ , Սահմանադրութիւնը մեր բոլոր
 ժողովոց եւ խորհրդոց անդամներուն համար
 անմիջական վերընտրելութեան պայմանը մեր-
 ժած է . տեսանք որ ծրագիրն ու տեղեկագիրը
 անոր հակառակ տրամադրութիւն մեզ կը յանձ-
 նարարեն . Սահմանադրութեան հեղինակք ,
 թերեւս այս տրամադրութեամբ միեւնոյն ան-
 ձանց շարունակ մեր ժողովարաններուն , խոր-
 հրդարաններուն եւ Պատրիարքարանի մէջ
 դեգերելնին արգիլելով , իշխանական զեղծ-
 մանց առջեւն առնել մաքաձած են . հարկաւ
 յանձնախումբ եւ դիւան պատճառներ պի-
 տի ունենան անոր հակոտնեայն պաշտպանե-
 լու . բայց այս պատճառներն , ինչ որ ալ ըլ-
 լան , այս կէտին պահպանողական սկիզբ մը
 կայ նկատողութեան առնելու , որ չկրնար վը-
 րիպիլ ժողովոյ ուշադրութենէն : Ասոնց ամե-
 նուն վրայ քիչ շատ խօսուեցաւ , եւ ծրագրին եւ
 տեղեկագրոց առաջարկած փոփոխութիւննե-
 բուն ողին ու սկզբունքը քննելէն ետեւ ընդ-
 հանուր վիճաբանութիւնը բաւական եւ զմեզ
 լուսաւորուած դատելով կպատրաստուինք երկ-
 րորդ ընթերցման . ըսել չէ որ ասոնց հետեւած
 սկզբունքն կատարելապէս ընդունեցինք եւ ա-
 աջարկած փոփոխութիւններն վաւերացու-
 ցինք . ոչ . ժողովն ազատ է թէ սկզբանց եւ
 թէ կանոնական տրամադրութեանց մասին իբր
 ազատ կարծիքը մէջ բերել յերկրորդ ընթերց-
 ման եւ ամեն բան բարեփոխել . բայց որպէս
 զի թիւրիմացութեամբ ատենախօսութիւնք չը
 չեղին խնդրոյն ուղղութենէն եւ գործերնիս
 վայրապար չերկարի , այս երկրորդ կէտին վը-
 բայ ալ պարտ համարիմ փոքրիկ բացատրու-
 թիւն տալ ժողովին :

Երկրորդ ընթերցման համար ես ծրագիրն
 ու տեղեկագրերը աչքէ անցուցի եւ տեսայ որ
 ասոնց ամենուն առաջարկած փոփոխութիւն-
 ները չորս կէտերու կրնան վերածուիլ :

Առաջինը կը վերաբերի Կեդրոնական վար-
 չական մարմնոյ կազմակերպութեան : Մենք ու-
 նինք ընդ նախադահութեամբ Պատրիարքի եր-
 կու ժողով 4 խորհուրդ եւ 5 հոգաբարձու-
 թիւն : Ասոնց տեղ մեզ կառաջարկուի 5 խոր-
 հուրդ , 1 դատարան եւ 2 հոգաբարձութիւն
 կազմել : Ասոր մէջ փոփոխութիւն կայ յորչորջ-
 ման եւ իրաւասութեան , միանգամայն անդա-
 մոց թուոյ , պաշտօնի տեւողութեան , վեր-
 ընտրելութեան , եւ հրաժարողաց տեղ ուրիշ-
 ներ ընտրելու պարագայից վերաբերեալ :

Երկրորդը թաղական մատակարարութեան
 վերաբերեալ է : Մենք ունինք թաղական խոր-
 հուրդներ ընտրեալ ուղղակի ի համայն թաղե-
 ցւոց , եւ թաղին բոլոր գործոց տնօրինող ընդ
 հսկողութեամբ Կեդրոնական Վարչութեան :
 Հիմա մեզ կառաջարկուի , թաղական ընտրողու-
 թեան իրաւունքը սեղմել , եւ թաղական խոր-
 հրդին քով թաղային ժողով մը սահմանել ,
 ընտրեալ ի թաղական ընտրողաց եւ ընտրող ,
 միանգամայն հսկող թաղական խորհրդին , որոյ
 անդամոց թիւն , պաշտօնի տեւողութեան մի-
 ջոցն եւ համարատուութեան ժամանակն ալ
 փոխուած են :

Երրորդ կէտը կը վերաբերի Ազգային ժո-
 ղովին , որոյ ընտրողաց իրաւունքը սեղմեալ ,
 եւ եկեղեցական անդամոց ընտրելութեան պայ-
 մանք ընդարձակեալ , եւ թէ աշխարհական եւ
 թէ եկեղեցական երեսփոխանաց ընտրութեան
 եղանակը փոփոխեալ կ'առաջարկուին . միան-
 գամայն փոփոխութիւն կ'ուզվի ժողովին մաս-
 նակի վերանորոգման միջոցին եւ եղանակին
 վրայ :

Վերջապէս չորրորդ կէտ մ'ալ կայ որ
 ուղղակի Սահմանադրութեան վերաքննութեան
 խնդրոյն կը պատկանի . ասոր մէջ ալ փոփոխու-
 թիւն կառաջարկուի սահմանեալ միջոցին եւ ե-
 դանակին վրայ :

Այս չորս կէտերէն դուրս թերեւս մանր
 մունր մէկ քանի փոփոխութիւններ ալ գտնուին
 առաջարկեալ ծրագրին ու տեղեկագրերուն
 մէջ , սակայն գլխաւորներն ասոնք ըլլալով եւ
 մնացեալներն ասոնց մէջ ամիսփիւ հնար ըլլա-
 լով , ժողովը կրնայ , իրաւամբ ասոնք իբր յօդ-
 ուած վերաքննութեան ծրագրի նկատել , եւ
 ասոնց վրայ ամիսփիւ երկրորդ ընթերցման
 վիճաբանութիւնը :

Ըսել չէ որ ասոնցմէ դուրս բան չը կրնար

առաջարկուիլ կամ ասոնք անպատճառ պէտք են ընդունուիլ ժողովէն: ոչ, ժողովը կրնայ առնցմէ ի բաց հանել մէկը երկուքը, եւ կամ ընդհակառակն հինգերորդ մ'ալ աւելցունել, թերեւս վեցերորդ մ'ալ: Բայց միշտ պէտք է կարգ մը ունենալ մասնաւոր վիճաբանութեան համար եւ ասոր համար ամենայամար կը տեսնեմ ամփոփած չորս կէտերս, զոր այսուհետեւ յօդուած պիտի անուանեմ, եթէ ժողովը կընդունի:

ՌՈՒՍԻՆԵԱՆ ԷՖ.— Ամենէն առաջ Նախաձեռնութեան զիւանին առաջարկութեանց վրայ պէտք է վիճաբանիլ, եւ անոր առաջարկած փոփոխութեանց կարգաւ ընթանալ:

ՓԱՓԱԶԵԱՆ Ս. ԷՖ.— Ոչ, պէտք է Վերաքննիչ յանձնաժողովին ցուցած յօդուածներուն կարգաւ վերաքննութեան ենթարկել խընդիրը:

Տ. ՄԱՏԹԷՈՍ Վ.— Ռուսինեան էֆէնտին ըսաւ թէ ամենէն առաջ Նախաձեռնութեան զիւանին կողմէ եղած առաջարկութիւնք վիճաբանութեան պիտի ենթարկուին: Շատ իրաւացի կըլար այդ, եթէ բարեփոխութիւն առաջարկած ըլլար Դիւանը: Բայց բարեփոխութիւն չէ եղածը, այլ նոր առաջարկութիւններ եկած են. ուստի պէտք է որ ըստ կարգին նախ Վերաքննիչ յանձնաժողովոյ առաջարկութիւնները եւ ապա Դիւանինը քննութեան առնուին:

ԱՏԵՆԱՊԵՏ ՓԱՇԱ.— Եթէ ծրագիր մը ըլլար ձեռքբերիս օրինաւոր կերպով խօսադրուած, ինչպէս որ կհաւատամ թէ կրնար ըլլալ եթէ ժողովին Կանոնադրութեան հաստատութենէն ետեւ գրի առնուած ըլլար, եւ եթէ անոր վրայ Նախաձեռնութեան զիւանը պատճառաբանեալ եւ կարեւորութեան աստիճանաւ կարգաւորեալ տեղեկագիր մը բերէր, անպատճառ նոյն տեղեկագիրն առաջ պիտի անցնէր. վերջը, եթէ տեղի մեար, ծրագրին վրայ պիտի վիճաբանուէր. բայց դժբաղդաբար Դիւանին մէջ թիւրիմացութիւն ծագելով 2 տեղեկագիր մէկէն եկած է

ՌՈՒՍԻՆԵԱՆ ԷՖ.— (Ընդհանրէլ) Ո՛չ, մէկ է, երկուքը միացեալ են:

ԱՏԵՆԱՊԵՏ ՓԱՇԱ.— (Շարունակէլ) Տեղեկագիրները քանի հատ կուզէք սեպիցէք. սա ստոյգ է որ այսօր ժողովը չ'ունի ձեռքը

յօդուած յօդուած բաժնուած կանոնական ծրագիր մը առաջարկեալ սահմանադրական փոփոխութեանց: Ուստի ես առաջնութեան եւ անձնասիրութեան պահանջմանց տեղի չը տալու համար, ծրագրէն եւ տեղեկագրերէն ծագեալ ըրի եւ ժողովին ներկայեցի չորս յօդուածներէ բաղկացեալ ամփոփ ծրագիր մը, եւ անոր վրայ պիտի ուղղեմ ժողովին յօդուածական վիճաբանութիւնը, եթէ կը հաճի:

(Ժողովն ասոր վրայ դիտողութիւն չ'ընելով եւ հաճութեամբ ընդունելու ցոյցեր տալով Ատենապետ փաշան շարունակեց ըսելով)

Ուրեմն ասկէ ետքն սկսելիք վիճաբանութիւնն իս առաջին յօդուածին վրայ է. վիճաբանութեան օրը պէտք է որոշենք: Յառաջիկայ նիստը 15 օրէն ետեւ պիտի ըլլայ. եթէ ժողովը կը կամի, այն նիստը Օրակարգի միւս խնդիրներուն նուիրենք, եւ վերաքննութեան խնդրոյն Ա. եւ երկրորդ ընթերցման մէջ ուրիշ նիստ մը անցունելով, Կանոնին տրամադրութեան ալ համաձայն շարժինք:

ՌՈՒՍԻՆԵԱՆ ԷՖ.— Ո՛չ, ոչ, շարունակենք վերաքննութեան խնդիրը. միջանկեալ նիստերը ժողովականաց մտքերը կը ճապաղեն:

Ուրիշ դիտողութիւն ընող չըլլալով, ժողովը Ատենապետին առաջարկութեամբ որոշեց յառաջիկայ նիստը դարձեալ վերաքննութեան խնդրոյն ընծայել, եւ որոշուեցաւ Օրակարգունենալ սակաւս:

Վերաքննութիւն Սահմանադրութեան. — Երկրորդ ընթերցում — Երկու քայլով քննարկուիլ. — Վիճաբանութիւն Ա. ՅՕԴՈՒԱԾՈՅ ՎՐԱՅ, որ պարունակէ կեդրոնական վարչական մարմնոյ ժողովոց, խորհրդոց եւ հոգաբարձութեանց կազմակերպութեան վերաբերեալ փոփոխութիւնք:

Ատենը՝ ժամը 10 ին քառորդ մնալով դոցուեցաւ:

ԱՏԵՆԱՊԵՏ	ԱՏԵՆԱՊԵՏ
Հ. Ս. ԱԼԱՃԱՃԵԱՆ	Ս. ԱՍԼԱՆԵԱՆ

ԱԶԳԱՅԻՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆ

ԿՐՕՆԱԿԱՆ ԺՈՂՈՎ

1. Տ. Խորէն	Արքեպիսկ	Նարպէյ	ԱՅՆԱԳԵՑ
2. Տ. Ներսէս	Վ.	Ասլանեան	ԱՅՆԱԳՊԻՐ
5. Տ. Ամբրոսիոս	Ս.	Իսկէնտէրեան	
4. Տ. Քէորդ	Ս.	Գերձակեան	
5. Տ. Զաքարիա	Շ.	Զիւմրիւթեան	
6. Տ. Խորէն	Ս.	Կիւրճեան	
7. Տ. Կարապետ	Ս.	Սերոբեան	
8. Տ. Յովնաննէս	Ս.	Փափազեան	
9. Տ. Արիստակէս	Ք.	Մամբրէեան	
10. Տ. Գրիգոր	Ս.	Արամեան	
11. Տ. Գրիգոր	Ս.	Աճէմեան	
12. Տ. Երեմիա	Ս.	Խասգիւղի	
15. Տ. Սուքիաս	Ս.	Ստեփաննոսեան	
14. Տ. Վրդաննէս	Ս.	Միջագիւղի	

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԺՈՂՈՎ

1. Սիմոն	Մաքսուտեան	պէյ	ԱՅՆԱԳԵՑ
2. Միքայէլ	Մամիկոնեան	էֆէնտի	ԱՅՆԱԳՊԻՐ
5. Աբրահամ	Հարենց	Ս.	
4. Աստիա	Իկիտպաշեան	Ս.	
5. Խաչիկ	Ալեանաքեան	Ս.	
6. Կարապետ	Փափազեան	Ս.	
7. Մկրտիչ	Էսաեան	Ս.	
8. Յակոբ	Կոստանդ	Ս.	
9. Յարութիւն	Գափամանեան	Ս.	
10. Սարգիս	Աբրահամեան	Ս.	
11. Սարգիս	Աբապեան	Ս.	
12. Սիմոն	Միքայէլեան	Ս.	
15. Սիմոն	Նորատունկեան	Շ.	
14. Ստեփան	Խնդիրեան	Ս.	

ԳԻՆ 2 ՂՐՈՒՇ

ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԿԵՒՐՈՆԱԿԱՆ ՍՆՏՈՒԿԻՆ

ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎՈՅ ԾԱԽՈՒՑ ԹԱՏԿԱՑԵԱՆ

Կը հախուշի ի Դիւանատան Պատրիարքարանի, և Ղալարիոյ Ս.
Լուսաւորիչ Եկեղեցոյ քանկալը և Հայ գրաւիւձարաց քով: